		Own income (thousand AMD)		Total expenditures aimed at solving own powers (thousand AMD)		Own income/own expenditures (%)	
№	Community	Annual plan	Fact	Annual plan	Fact	Annual plan	Fact
21	Meghri	272,327	236,970	1,356,665	993,912	20.1%	23.8%

As for the more backward communities, the picture is the same here, only the observed indicators are at a much lower level (Table 5).

Thus, the ratio of own income and expenses is the highest in the communities of Karaberd – 32.1%, Vardashat – 30.5%, Halavar – 30.4%, while in communities with lower incomes this figure reaches 4–6%. This means that such communities do not even have the means necessary for their minimum subsistence.

In these conditions, the main source of funding for community expenditures remains funds received from the state budget, in particular, subsidies provided on the principle of financial equalization.

Table 5. The ratio of own income and expenditures in the 20 most backward communities, 2020 [20, 21].

		Own income (thousand AMD)		Total expenditures aimed at solving own powers (thousand AMD)		Own income/own expenditures (%)	
No	Community	Annual plan	Fact	Annual plan	Fact	Annual plan	Fact
1	Karaberd	2,292	1,610	9,238	5,011	24.8%	32.1%
2	Halavar	2,533	1,555	7,970	5,114	31.8%	30.4%
3	Vardashat	1,564	1,553	5,283	5,096	29.6%	30.5%
4	Vazashen	2,542	1,477	23,394	22,316	10.9%	6.6%
5	Arevut	944	1,459	6,200	5,720	15.2%	25.5%
6	Hako	2,402	1,291	7,060	5,912	34.0%	21.8%
7	Lusahovit	1,298	1,008	8,585	8,258	15.1%	12.2%
8	Hovtashen	2,652	1,000	44,605	21,543	5.9%	4.6%
9	Kanch	1,217	938	8,840	6,779	13.8%	13.8%
10	Verin Sasunik	1,450	904	5,926	4,528	24.5%	20.0%
11	Acharkut	1,035	861	6,897	4,368	15.0%	19.7%
12	Antarashen	1,115	846	6,398	5,736	17.4%	14.7%
13	Ddmasar	1,125	809	13,756	5,261	8.2%	15.4%
14	Sorik	2,088	757	7,608	5,404	27.4%	14.0%
15	Tsaghkasar	1,466	729	5,328	4,604	27.5%	15.8%
16	Dian	1,295	693	5,740	5,138	22.6%	13.5%
17	Tlik	2,011	690	7,448	5,547	27.0%	12.4%
18	Urtsalanj	520	459	4,764	4,653	10.9%	9.9%
19	Metsadzor	611	386	5,723	4,617	10.7%	8.3%
20	Dprevank	262	329	5,800	4,991	4.5%	6.6%

Conclusions

Thus, as a result of the analysis of the finances of the regions and communities of the Republic of Armenia, we can state that the disparities between the powers of the communities defined by the law and the means necessary for their implementation are obvious. Here, financial decentralization and local independence have not yet yielded tangible results. Funds received from the state budget and other external sources still account for a significant share in the structure of municipal budget revenues. Moreover, as the data shows, they continue to show a stable upward trend. And the decentralization process can be more effective if local governments are able to generate most of their income locally. Therefore, first of all, it is necessary to coordinate the transfer of functions by the central government with the financial possibilities for their implementation. Otherwise, the process of decentralization will be formal, and funding of communities and ensuring their further development will largely depend on the central government.

REFERENCES

1. <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=122>: Council of Europe, The European Charter of Local Self-Government
2. <http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>: Constitution of the Republic of Armenia
3. *Marcheva L.M.*, Problems of Financing Local Self-Government in Russia and Great Britain”, Bulletin of the Northern Federal University. Series: Humanities and Social Sciences, No. 4/2012. P. 60–63.
4. *Gough R.*, “With a Little Help from Our Friends, International Lessons for English Local Government”, Local Government Association, Localis, 2009.
5. *Lepeshkin M.V.* Issues of balancing local budgets, University Bulletin 4/2013, State University of Management, Moscow.
6. *Kuznetsova O.P.* Problems of the formation and development of the financial foundations of local self-government, Bulletin of the Baikal State University, 1/2003.
7. <https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/submitViewTableAction.do> – Eurostat
8. <https://www.armstat.am/> - Statistical Committee of the RA
9. <https://www.gov.am/am/budget/>: The Government of the Republic of Armenia, State Budget.
10. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary incomes.
11. The same.
12. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary expenditures
13. RA Law on Local Self-Government.
14. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary incomes
15. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary expenditures
16. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary incomes
17. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary expenditures

18. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary incomes
19. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary expenditures
20. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary incomes
21. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> – Ministry of Territorial Administration and Infrastructure, Budgetary expenditures

ОЦЕНКА РАЗРЫВА МЕЖДУ ПОЛНОМОЧИЯМИ МЕСТНЫХ САМОУПРАВЛЕНИЙ И МЕХАНИЗМАМИ ИХ ФИНАНСИРОВАНИЯ

О.А. Мелкумян

АННОТАЦИЯ

В данной статье речь идет о том, что любое государство, государственная система – та или иная политика, реализуемая ею, не может эффективно работать без наличия соответствующего механизма финансирования. Исследования показывают, что законы Республики Армения, регулирующие сферу местного самоуправления, наделяют органы местного самоуправления около 300 полномочиями, которые, однако, зачастую, не выражают ожиданий жителей общины в отношении получения конкретных государственных услуг. Суть проблемы заключается в том, что децентрализация полномочий органов местного самоуправления не сопровождалась децентрализацией финансовых ресурсов, в результате чего необходимые финансовые источники для осуществления полномочий органов местного самоуправления часто не хватает. В рамках анализа мы оценили степень финансовой самостоятельности общин РА путем расчета соответствующих показателей, изучили существующие бюджетные диспропорции по регионам и общинам, а также предприняли попытку выразить в цифровом виде разрыв между полномочиями сообществ и существующих финансовых возможностей.

Ключевые слова: региональное развитие, местное самоуправление, местные бюджеты, собственные доходы и расходы, финансовый дефицит.

ЮРИСПРУДЕНЦИЯ

DOI 10.48200/1829-0450_2021_3_84
УДК 341

Поступила: 20.11.2021г.
Сдана на рецензию: 23.11.2021г.
Подписана к печати: 28.12.2021г.

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Ս. Ղամբարյան

*Հայ-ռուսական համալսարան
artur.ghambaryan@gmail.com*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացվում է ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ՀՀ քաղաքական իշխանությանը հասցեագրված վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը: Այդ նպատակով վերլուծվում են ՀՀ սահմանադրական դատարանի 16.04.2003թ. ՄԴՈ – 412 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները:

Հեղինակը ներկայացնում է ՀՀ Սահմանադրական դատարանի այս առաջարկի պետականագիտական և սահմանադրաիրավական նշանակությունը, ինչպես նաև քաղաքական իշխանության կողմից այս առաջարկն անտեսելու հետևանքները:

Հիմնաբառեր՝ վստահության հանրաքվե, սահմանադրականություն, ՀՀ Սահմանադրական դատարան, քաղաքական իշխանություն:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ Սահմանադրական դատարանի իր գոյաբանությունն արդարացրել է հանրային կյանքի համար կարևոր ու վճռորոշ բազում հարցերի՝ սահմանադրական լուծումներով: Օրինակ՝ ՀՀ դատարանները, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 1999–2006թթ. -ին, ի հակառակ քաղ. դատ. օր-ի 26-րդ գլխով նախատեսված կարգավորումների, անհիմն պատճառաբանություններով հրաժարվում էին քննել քաղաքացիների այն դիմումները, որոնցով վիճարկվում էին ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ բնույթի ակտերի օրինականությունը: ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց հրաժարվելու հիմնական պատճառը Հայաստանի դատավորների, ի հաշիվ մարդու դատական պաշտպա-

նության իրավունքի, քաղաքական իշխանությունից անվտանգ հեռավորություն պահելու ձգտումն էր, ինչը ՀՀ քաղաքական և դատական համակարգերում սահմանադրական մշակույթի բացակայության ցուցիչներից էր: ՀՀ դատարանների՝ քաղաքական իշխանությանը չհակադրվելու և քաղաքական դերակատարներից անվտանգ հեռավորություն պահելու այս ամոթալի պրակտիկան վերացվեց և մարդու դատական պաշտպանության իրավունքն ապահովվեց միայն ՀՀ Սահմանադրական դատարանի միջամտությամբ (ՀՀ Սահմանադրական դատարանի 26.11.2006թ. ՄԴՈ-665 որոշում):

ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեության ընթացքում ականատես եմք եղել՝ Բարձր դատարանի մտածողության մասշտաբայնությանը, որն իր ծավալներով ակնհայտորեն դուրս էր այդ պահին գերակայող՝ տակտիկական և կարճաժամկետ արդյունավետությունը կարևորող քաղաքական դերակատարների մտածողության սահմաններից: ՀՀ Սահմանադրական դատարանի՝ հատկապես պետականապահպան նշանակության որոշումները հանրային խնդիրների՝ միայն տակտիկական լուծումները տեսնող դերակատարների համար երբեմն հասկանալի և ընկալելի չէր, ինչն առաջացնում էր սահմանադրական արդարադատության նկատմամբ քաղաքական իշխանության չարդարացված հակադրությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ պետականապահպան նշանակության դիրքորոշումներից (ակտերից) կառանձնացնենք երկուսը: Առաջին գործը վերաբերում է ՀՀ Նախագահի 2003թ. ընտրության արդյունքներից հետո հասարակության ներսում առկա սուր դիմակայությունը հաղթահարելու նպատակով վստահության հանրաքվե կազմակերպելու ՀՀ Սահմանադրական դատարանի առաջարկին, որով փորձ արվեց կանխել պետականությանը սպառնացող ներքին վտանգները (ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2003թ. ՄԴՈ – 412 որոշում): Երկրորդ գործը վերաբերում է Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը սահմանադրականացնելուն, որով փորձ արվեց կանխելու արտաքին վտանգները (ՀՀ Սահմանադրական դատարանի 12.01.2010թ. ՄԴՈ-850 որոշում):

2. Վստահության հանրաքվե կազմակերպելու սահմանադրական առաջարկը և այն չընկալելու հետևանքները

2.1. ՀՀ Նախագահի՝ 2003թ. ընտրության արդյունքների վիճարկումը ՀՀ Սահմանադրական դատարանում: ՀՀ Նախագահի՝ 2003թ. ընտրության գործընթացի և արդյունքների օրինականության նկատմամբ հասարակական անվստահությամբ պայմանավորված, տեղի ունեցան զանգվածային բողոքի ակցիաներ: Ընդ որում՝ «իշխանության և հասարակության միջև մեծացող խզման», «հասարակության պառակտմանն ուղղված գործողությունների», «պառակտված ազգի» մասին նշում էր նաև վերընտրված Նախագահը[1]:

Հասարակության պառակտման, հասարակական դիմակայության պատճառներից մեկն էլ ընտրությունների ընթացքում թույլ տրված տեսանելի խախտումներին էին, որոնց կապակցությամբ տարիներ անց, վերընտրված Նախագահը նշել է.

«Անկասկած՝ տարբեր խախտումներ էին պատահում, և առավել հաճախ դրանց պատճառը տեղերում թիմերի՝ խոստացված տոկոսներն ապահովելու մղումն էր: Կանխատեսված թվերի մեջ չտեղավորվողները երբեմն դիմում են խորամանկությունների՝ ամեն կերպ ձգտելով ապահովել արդյունքը: Համարում են, որ դրանից է կախված ընտրված նախագահի վերաբերմունքն իրենց հանդեպ, իսկ դա ուժեղ, բայց ապակառուցողական շարժառիթ է: Ընդ որում՝ մարդիկ մեքենայությունների են դիմում՝ հակառակ բազմակի նախագգուշացումների, որ ոչ ոք իրենց օգնության չի հասնելու. Եթե բռնվեցին, պարտավոր են լինելու պատասխան տալ [2]»:

Տեղեկություններ այն մասին, թե այս խախտումներ թույլ տրված անձանց բացահայտելու, նրանց նկատմամբ քրեական հետապնդումներ հարուցելու և իրականացնելու հարցում ինչպիսի հետևողականություն է ցուցաբերվել, հասանելի չէ:

ՀՀ Նախագահի 2003թ.-ի ընտրության արդյունքները վիճարկվեց ՀՀ Սահմանադրական դատարանում: Սահմանադրական դատավարության ընթացքում հասարակության մեջ առկա սուր դիմակայությունը դարձավ առավել տեսանելի, իսկ հասարակական համակարգի բիֆուրկացիոն վիճակն ակնհայտ էր բոլորի և յուրաքանչյուրի համար. չնչին որևէ առիթ կարող էր առաջացնել անկանխատեսելի հետևանքներ: Նման պայմաններում ընտրական վեճը լուծող ՀՀ Սահմանադրական դատարանը պետք է պոզիտիվ իրավամտաձողության դատարանից վերաճեր իմաստասիրության (իրավունքի փիլիսոփայության) դատարանի, ում առաջնային խնդիրներից էր՝ տարրալուծելու հասարակությունում կուտակված և պետականապահպան սկզբունքներին (սահմանադրական կարգի) սպառնացող վտանգավոր էներգիան և կանխելու հասարակական դիմակայության նյութականացումը բռնության:

2.2. Վստահության հանրաքվե կազմակերպելու իմաստասիրական առաջարկը: ՀՀ Սահմանադրական դատարանն իր առջև կանգնած խնդիրներին մոտեցավ իմաստասիրությամբ և 16.04.2003թ. ՄԴՈ-412 որոշմամբ ոչ թե պարզապես լուծեց ընտրության վերաբերյալ իրավական վեճը, այլև այդ որոշման եզրափակիչ մասի 6-րդ կետում ՀՀ նորընտիր Ազգային ժողովին և ՀՀ Նախագահին առաջարկեց

1) մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքներին համահունչ համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 2-րդ փոփոխման ոչ ենթակա, հոդվածի առաջին մասի պահանջներին.

2) որպես նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը:

ՀՀ Սահմանադրական դատարանը, իրավափիլիսոփայական տեսանկյունից սպասված և պետականապահպանությամբ թելադրված, այս առաջարկի հիմքում դրել էր հետևյալ գործոնները.

1) սահմանադրական ժողովրդավարության դեռևս անկատար համակարգի պայմաններում ընտրական վեճի՝ պետության ճակատագրի համար վճռորոշ նշանակություն ունենալը.

2) անվստահության և անհանդուրժողականության վրա խարսխված հասարակական-քաղաքական իրավիճակը.

3) ՀՀ-ում սահմանադրական կարգի ամրապնդման և Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը.

4) ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների կազմավորման գործընթացի ու պետական իշխանության մարմնի նկատմամբ հասարակության շարունակական լայն վստահության կարևորությունը հենց այդ մարմինների համար:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկությունն անսպասելի էր դատավարության կողմերի և հասարակության համար: Դատական նիստերը լուսաբանող լրագրողները հետևյալ կերպ են նկարագրում վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի վերաբերյալ՝ դատական նիստի դահլիճում գտնվող դատավարության մասնակիցների առաջին տպավորությունները և արձագանքները.

«Այս վերջին՝ բավական անսպասելի առաջարկությունը Սահմանադրական դատարանը լքող քաղաքական գործիչների միջավայրում առաջացրել էր բավականին բուռն քննարկումներ: Ընդ որում, բոլորը, ում հնարավոր էր լսել, անկախ քաղաքական ուղղվածության, սկզբունքորեն չէին առարկում, ամենայն հավանականությամբ, ենթադրելով, որ նման միջոցառումը միայն կհաստատի իրենց իրավացիությունը» [3]:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-412 որոշումը ունի ներքին հակասություն, քանի

որ ՀՀ Սահմանադրական դատարանը մի կողմից՝ հաստատել է ՀՀ Նախագահի ընտրության արդյունքների օրինականությունը (անփոփոխ է թողել ՀՀ Նախագահ ընտրվելու մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2003թ. մարտի 11-ի թիվ 36-Ա որոշումը), մյուս կողմից՝ առաջարկել էր կազմակերպել վստահության հանրաքվե¹: Մինչդեռ հարցն առավել խորքային դիտարկելու դեպքում պարզ է դառնում, որ այդ որոշման մեջ ներքին որևէ հակասություն չկա, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանը մի կողմից՝ դատավարական ապացույցների հիման վրա հաստատել է ընտրության արդյունքների լեգալությունը (օրինականությունը), մյուս կողմից՝ առաջարկել էր, վստահության հանրաքվե կազմակերպելով, պարզել իշխանության լեգիտիմությունը: Բանն այն է, որ պոզիտիվ իրավունքի կանոնների հիման վրա ձեռք բերված ապացույցներով երբեմն հնարավոր չէ հաղթահարել ընտրության արդյունքների անվավերությանը ներկայացվող բարձր ապացուցողական շեղում: Այն ինչ ակներև է բոլորին և յուրաքանչյուրին, կարող է և դատավարական ապացույցներով ապացուցելի (տեսանելի) չլինել: Այս իրավիճակներում հասարակության համար անբացատրելի է, որ դատական (ապացուցելի) ճշմարտությունը կարող է և չհամընկնել օբյեկտիվ իրականության հետ:

Եթե սահմանադրական դատավարության շրջանակներում ընտրության արդյունքների օրինականության (լեգալության) հարցը քննարկվում է հասարակական սուր դիմակայության պայմաններում, ապա այդ վեճը լուծող մարմինն այլ տարբերակ չունի, քան դուրս գալու պոզիտիվ իրավունքի կապանքներից և հարցը դիտարկելու իրավափիլիսոփայական, այդ թվում՝ իշխանությունների լեգիտիմության տեսանկյունից:

Բացի այս, հետընտրական գործընթացները շուտ եզրափակելու և պետական ապարատի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, ընտրական իրավունքը պահանջում է ընտրական վեճերն լուծել հնարավորինս արագ և անբեկանելի կերպով (ընտրական վեճերի լուծման սեղմ ժամկետներ, ընտրական վեճերն ըստ էության լուծող ակտերի անբողոքարկելիություն, ընտրությանը վերաբերող արխիվների ոչնչացման սեղմ ժամկետներ և այլն): Այս տեսանկյունից՝ ՀՀ Սահմանադրական դատարանը թեև ֆորմալ-

¹ ՀՅԴ բյուրի անդամ Վահան Հովհաննիսյանը նշում էր, որ իրեն համար հասկանալի չէ վստահության հանրաքվեի և Սահմանադրության 2-րդ հոդվածի կապը: Եթե արվում է ակնարկ, թե երկրում տեղի է ունեցել իշխանության բռնազավթում՝ ուրեմն ՀՀ Սահմանադրական դատարանը պետք է ունենար այնքան քաղաքացիական խիզախություն, որ ասեր, եթե տեղի է ունեցել բռնազավթում կամ կա դրա կասկած, ու ԿՀՀ-ի որոշումը սխալ է, ուժի մեջ չէ և պետք է տեղի ունենա նոր ընտրություններ: Բայց, եթե ՀՀ Սահմանադրական դատարանն ասում է՝ ոչ, Նախագահը լեգիտիմ է, ապա այդ դեպքում հասկանալի չէ՝ ինչ նկատի ունենան այս վկայակոչմամբ, Սահմանադրության հենց այդ կետի հետ կապելով այս պարբերությունը: «Առավոտ», 18 ապրիլ, 2003:

իրավաբանական իմաստով լուծեց ընտրական վեճը, սակայն չեզրափակեց հետընտրական գործընթացները: Ընտրական իրավունքի տրամաբանությունից թույլ տրված այս շեղումն արդարացվում է անվստահության և անհանդուրժողականության վրա խարսխված հասարակական-քաղաքական իրավիճակում քաղաքացիական համերաշխություն հաստատելու, հասարակական դիմակայությունը հաղթահարելու անհրաժեշտությամբ:

Որ տեսակի միտքն էր ունակ ըմբռնելու վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի իմաստաիրական (ռազմավարական) նշանակությունը: Ն. Մաքիավելլին առանձնացնում էր խելքի (մտքի) երեք տեսակ. Առաջինն ամեն բան ըմբռնում է ինքնուրույն, երկրորդը՝ կարող է հասկանալ այն, ինչ ըմբռնել է առաջինը, իսկ երրորդը՝ ինքը ոչինչ չի ըմբռնում, իսկ ուրիշի ըմբռնածը հասկանալ չի կարող: Առաջին խելքը՝ բացառիկ է, երկրորդը՝ երևելի, երրորդը՝ անպետք [4]:

ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը, որպես բացառիկ մտքի կրողներ, թերևս ըմբռնել էր պատմական այդ ժամանակաշրջանում պետականությանը սպառնացող վտանգները և դրանով պայմանավորված՝ քաղաքական իշխանությանը առաջարկել էր կազմակերպելու վստահության հանրաքվե: Սակայն միայն *երևելի միտք* ունեցող պետական-հասարակական գործիչները և իրավաբաններն էին ունակ *հասկանալու* ՀՀ Սահմանադրական դատարանի *ըմբռնածը* և դրանից բխող առաջարկի իմաստը և նշանակությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ պետականապահպանության տեսանկյունից իմաստաիրական որոշման հրապարակումից որոշ ժամանակ անց «վայ մասնագետները բարձրացրեցին աղմուկ-աղաղակ, իսկ իշխանությունները նախաձեռնեցին աննախադեպ հարձակումները» [5]: Օրինակ՝ ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը վստահության հանրաքվե կազմակերպելու վերաբերյալ առաջարկը իրավական և քաղաքական տեսանկյուններից անընդունելի էր համարել՝ նշելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանը գերազանցել է իր լիազորությունների շրջանակը, մտել է քաղաքական այնպիսի գործընթացների մեջ, որոնք դուրս են իր գործառույթներից՝ նպաստելով քաղաքական կյանքում և հասարակություննան մեջ լարվածության պահպանմանը [6]: ՀՀ դատախազությունը ՀՀ Սահմանադրական դատարանի այս որոշումը որակեց «բարոյաբարոզչական, ընդհանուր ուսուցողական բնույթի և լոկ հռչակագրային» փաստաթուղթ:

Եզակի քաղաքական գործիչներ էին, ովքեր որոշակի իմաստով ունակ եղան *հասկանալու* ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի ռազմավարական նշանակությունը: Օրինակ՝ «Միասնության» ղեկավար Գալուստ Սահակյանը նշել է.

«Այդ մասն (վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը՝ Ա.Ղ.) ավելի շատ քաղաքական որոշում էր՝ հաշտեցնելու հասարակության մեջ առկա երկու բևեռները: Երդման արարողության ընթացքում այդ մասին խոսեց նաև ՀՀ Նախագահը: Կարծում եմ՝ նույն խնդիրն իր առաջ դրել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը» [7]:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի դեմ հնչող հիմնական առարկությունն այն էր, թե իբրև ՀՀ Սահմանադրական դատարանը դուրս է եկել իր լիազորություններից: Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահն ի պատասխան բազմաթիվ քննադատությունների, փորձեց բացատրել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ շեշտը դրել է ոչ թե իրավասության իրացման կարգի, այլ դրա էության վրա և չի առաջնորդվել պահպանողական պոզիտիվիստական մոտեցումներով [8]: Լայն իրավաբանական հիման վրա տրված նման բացատրությունը բնականաբար հասկանալի չէր տվյալ ժամանակաշրջանում գերակայող պոզիտիվ իրավական մտածողությանը, որի կրողները ունակ չէին իրավունք փնտրել և տեսնել օրենքի տեքստից (օրենքի տառից) դուրս, իսկ քաղաքական դերակատարները կարող չէին ըմբռնելու քաղաքական նպատակահարմարության (իշխանատենչության) համեմատությամբ պետականապահպանության սկզբունքների կարևորությունը և ՀՀ Սահմանադրական դատարանի՝ այդ սկզբունքները պահպանելու առաքելությունը:

Նշվածի համատեքստում պետք է դիտարկել ՀՀ երկրորդ Նախագահի՝ տարիներ անց տված՝ «Հարությունյանը չկարողացավ ընկալելի հիմնավորել իր որոշումը» [9] գնահատականը: Պարզապես մեկ ճշգրտում՝ որևէ մեկն անկարող է ընկալելի հիմնավորել վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի իմաստասիրական (պետականապահպան) էությունը, եթե այն գնահատվում է բացառապես անձնային կամ պոզիտիվիզմի (լեզիզմի) դիրքերից:

ՀՀ Սահմանադրական դատարանի այս առաջարկի վերաբերյալ իշխանական իրավաբանների ադուկ-ադաղակին և քաղաքական դերակատարների հարձակումներին զուգահեռ ցավալիորեն նկատվում էր ակադեմիական հանրության «քար» լուրջությունը. այդ ժամանակոր է իրավաբան-գիտնական ՀՀ Սահմանադրական դատարանի այս առաջարկը չենթարկեց պետականագիտական վերլուծության: Միայն տարիներ անց հայ սահմանադրագետները գրեցին.

«Վստահության հանրաքվեն կնպաստի քաղաքական ճգնաժամերի մեղմացմանը կամ քաղաքական սուր ճգնաժամերի դեպքում, երբ նախապատվելի միջոց է համարվում քաղաքական անհնազանդությունն ու անհանդուրժողականությունը, առաջնային մանդատ ունեցող իշխանության մարմինների լիազորությունների դադարման հարցը հանրաքվեի առարկա դարձնելը կարող է էապես նվազեցնել անհարկի լարվածությունը և երկիրը հետ պահել քաղաքական անցանկալի ցնցումներից» [10]:

Հետաքրքիրն այն է, որ նույնիսկ առանձին սահմանադրագետներ առ այսօր կարծում են, որ 2003թ. ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկի համար առկա չէին համապատասխան իրավական հիմքեր [11]: Այս դեպքում կրկին գործ ունենք պահպանողական պոզիտիվ իրավական մտածողության հետ:

2.3. Վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը չընդունելու հետևանքները: Ամենակարևոր հարցը՝ քաղաքական իշխանությունը արդյոք ընդունե՞ց ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը և կազմակերպե՞ց վստահության հանրաքվեն: Վերը նշվածից արդեն հասկանալի է, որ քաղաքական իշխանությունը, ելնելով բացառապես հարցի քաղաքական արդյունավետության և պատվախնդրության (ուժի) դիրքերից, չէր ընդունելու վստահության հանրաքվե կազմակերպելու սահմանադրական առաջարկը: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելու հաջորդ օրը ՀՀ Նախագահի աշխատակազմը հայտարարեց, որ վստահության հանրաքվեն կազմակերպելու առաջարկությունն առնվազն զարմանք է հարուցում և, բնականաբար, չի կարող իրավական որևէ ազդեցություն կամ հետևանք ունենալ [12]:

Վստահության հանրաքվե կազմակերպելու՝ պոզիտիվ իրավական տեսանկյունից՝ ոչ պարտադիր առաջարկի կամավոր կատարումը կհամարվեր քաղաքական իշխանության **ինքնասահմանադրականացման** բացառիկ օրինակ, ինչը, ամենայն հավանականությամբ, ապագայում կձևավորեր հանրային կյանքը սահմանադրական կանոններով (սահմանափակումներով) ապրեցնելու, դատական իշխանությունը հարգելու և դրա նկատմամբ քաղաքական իշխանության կողմից ոտնձգություններ չթույլատրելու հրամայականը: Այսպիսով, բաց թողնվեց հայ քաղաքական և պետական դերակատարների կողմից սահմանադրական սահմանափակումները հարգելու և դրանք պահպանելու մշակույթի ներդրման պատմական շանսը:

ՀՀ երկրորդ Նախագահը տարիներ անց՝ վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկին հաջորդած քաղաքական իրադարձությունների նկարագրությունը եզրափակում է հետևյալ մտքով.

«Բոլորն անմիջապես մոռացան հանրաքվեի մասին: Դրանով էլ ավարտվեց այդ պատմությունը» [13]:

ՀՀ երկրորդ Նախագահը, երբ նշում է, որ վստահության հանրաքվեի մասին մոռացվեց և պատմությունը դրանով ավարտվեց, ամենայն հավանականությամբ նկատի ունի, որ հետագայում վստահության հանրաքվե կազմակերպելու վերաբերյալ հանրային կյանքում տեսանելի պահանջներ այլևս չհնչեցին:

Հանրաքվե կազմակերպելու առաջարկի մասին մոռանալու և այդ պատմությունն ավարտվելու վերաբերյալ գնահատականը պատրանքային է: Նախնման գնահատականը հիմնված է, բացառապես արտաքին աշխարհի տեսանելի հատկանիշների վերլուծության վրա: Այսինքն, եթե չկա վստահության հանրաքվե կազմակերպելու մասին հասարակական-քաղաքական պահանջ, ուստի եզրահանգում է արվում, որ դրանով պատմությունն ավարտվեց: Բացի այդ, այնպիսի տպավորություն է, որ երևույթների՝ նույնիսկ ռետրոսպեկտիվ գնահատականները ձևակերպվում են առավելապես իշխանության ուժի կամ պատվախնդրության (թասիբի) դիրքերից, բայց ոչ՝ կառավարման իմաստասիրական և հեռատեսության պահանջների հիման վրա: Ընդունելի է, այն միտքը, որ լինում են պահեր՝ կապված երկրի ճակատագրի հետ, երբ սեփական վճռից ետ կանգնելն ավելի պատվաբեր է, քան համառելը:

Արդյոք կարելի է փաստել, որ վստահության հանրաքվեի պատմությունն իրականում ավարտվեց, արդյոք դա նշանակում է, որ պատմական այդ ժամանակաշրջանում վստահության հանրաքվե կազմակերպելու և իշխանության լեգիտիմությունը վերստուգելու հասարակական սպասումները տարրալուծվեցին, իսկ հասարակական դիմակայությունը վերացվեց: Այս հարցերին էմպիրիկ փաստարկումներով դժվար, միգուցե նաև, անհնար է պատասխանել, սակայն դրանց շուրջ դատողություններ հնարավոր է կատարել բնության (ֆիզիկայի) օրենքների հարթությունում:

Ըստ էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի՝ էներգիան չի ստեղծվում և չի կորում, ուղղակի փոխակերպվում է մի տեսակից մյուսը, անցնում մի մարմնից մյուս մարմնին: Այլ կերպ ասած՝ ֆիզիկայի օրենքի համաձայն, ոչ մի էներգիա անհետք չի մնում կամ չի կորչում: Նույնը նաև հասարակական օրգանիզմների պարագայում է. հասարակությունում կուտակված բացասական էներգիան ինքնին չի վերանում, այն կարող է փոխակերպվել այլ էներգիայի: Այս դիրքերից ելնելով կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ հասարակությունում կուտակված բացասական էներգիան տարրալուծելուն (հասարակական դիմակայությունը վերացնելուն) ուղղված վստահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը չիրականացնելով՝

այն կուտակվեց և դրսևորվեց այլ կերպ: Այս համատեքստում կարելի է հավանական դատողություն անել այն մասին, որ վատահության հանրաքվեն չկազմակերպելով՝ ոչ թե այդ պատմությունն ավարտվեց, այլ դրվեց ողբերգական պատմությունների նոր սկիզբը: ՀՀ Նախագահի հաջորդ ընտրություններից հետո՝ 2008թ. մարտի մեկին տեղի ունեցավ մեր պատմության ամոթալի էջերից մեկը՝ Երևան քաղաքում կազմակերպվեցին զանգվածային անկարգություններ և սպանվեց տասը մարդ: Հասարակական դիմակայությունը չտարրալուծվեց նույնիսկ 2008թ. մարտի մեկի դեպքերից հետո: Հայաստանում 2018թ. տեղի ունեցավ իշխանափոխություն (այն կազմակերպողներն անվանում են՝ հեղափոխություն), որի՝ պետականությանը սպառնացող վտանգները դեռևս ամբողջ ծավալով բացահայտված չեն:

3. Եզրակացություններ

Կատարված վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վատահության հանրաքվե կազմակերպելու առաջարկը հիմնված էր անվստահության և անհանդուրժողականության վրա խարսխված հասարակական-քաղաքական իրավիճակում քաղաքացիական համերաշխություն հաստատելու, հասարակական դիմակայությունը հաղթահարելու անհրաժեշտությամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-412 որոշումն առաջին հայացքից ունի ներքին հակասություն, քանի որ մի կողմից՝ հաստատել է ՀՀ Նախագահի ընտրության արդյունքների օրինականությունը, մյուս կողմից՝ առաջարկել էր կազմակերպել վատահության հանրաքվե: Հարցի առավել խորքային ուսումնասիրության դեպքում պարզ է դառնում, որ այդ որոշման մեջ ներքին որևէ հակասություն չկա, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանը գնահատել է տարբեր երևույթներ. մի կողմից՝ դատավարական ապացույցների հիման վրա հաստատել է ընտրության արդյունքների *լեգալությունը* (օրինականությունը), մյուս կողմից՝ առաջարկել էր, վատահության հանրաքվե կազմակերպելով, պարզել իշխանության *լեգիտիմությունը*:

Քաղաքական իշխանության կողմից վատահության հանրաքվե կազմակերպելու՝ պոզիտիվ իրավական տեսանկյունից՝ ոչ պարտադիր առաջարկը չկատարելը իշխանության ինքնասահմանադրականացման բաց թողնված հնարավորություն էր: Այս առաջարկը չկատարելը իմպլիցիտ կերպով խորացրեց հասարակական դիմակայությունը, իսկ հայոց պետականության հետագա զարգացման, և նույնիսկ պետականապահպանության համար ստեղծեց վտանգներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ // Արմենպրես, 9 Ապրիլ, 2003թ.

2. *Քոչարյան Ռ.* Կյանք և ազատություն, Եր., 2019: էջ 399:
3. Голос Армения, 17 апрель, 2003.
4. *Макиавелли Н.* Избранные сочинения. Пер. с итал. М.: Худож. лит., 1982. С. 369.
5. *Հարությունյան Գ.* Ժամանակի մեջ գոյի իմաստավորման դասերը ...: Գիրք I. Եր.: 2019, էջ 247:
6. Հայաստանի Հանրապետություն, 18 ապրիլ, 2003:
7. Առավոտ, 18 ապրիլ, 2003:
8. *Հարությունյան Գ.* Իրավունքի ընկալման հայկական այբուբենը կամ «Որոգայթ Փառացի» 230 տարի հետո // ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2003, № 3(28), էջ 10:
9. *Քոչարյան Ռ.* Կյանք և ազատություն, Եր., 2019: էջ 400:
10. *Դանիելյան Գ.* Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները // Պետություն և իրավունք, 2014, № 3–4 (65–66), էջ 16:
11. Նույն տեղում:
12. Արմենպրես, 17 Ապրիլ, 2003թ.:
13. *Քոչարյան Ռ.* Կյանք և ազատություն, Եր., 2019: էջ 402:

**ПРЕДЛОЖЕНИЕ КОНСТИТУЦИОННОГО СУДА РА ПО
ПРОВЕДЕНИЮ РЕФЕРЕНДУМА О ДОВЕРИИ И УПУЩЕННАЯ
ВОЗМОЖНОСТЬ ПОЛИТИЧЕСКОЙ ВЛАСТИ В ВОПРОСЕ
САМОКОНСТИТУЦИОНИРОВАНИЯ**

А.С. Гамбарян

АННОТАЦИЯ

Конституционный Суд РА оправдал свое существование – конституционными решениями важных и судьбоносных вопросов общественной жизни. Например, суды РА, в том числе Кассационный Суд РА в 1999–2006 гг., вопреки положений, предусмотренных в 26 главе гражданско-процессуального кодекса РА, по необоснованным мотивам отказывались рассматривать заявления граждан, которые оспаривали законность актов нормативного характера Президента РА и Правительства РА. Основная причина отказа от проверки законности нормативно-правовых актов Президента РА и Правительства РА – это стремление судей Армении за счет прав человека на судебную защиту сохранять безопасное расстояние от политической власти, что было одним из индикаторов отсутствия конституционной культуры в политической и судебной системах РА. Эта постыдная практика судов РА не противопоставляться политической власти и держаться на безопасном расстоянии от политических акторов была отменена, и право на судебную защиту человека было обеспечено только вмешательством Конституционного Суда РА (постановление Конституционного Суда РА от 26.11.2006 г. ПКС – 665).

Из позиций (актов) Конституционного Суда РА, имеющих государственно-охранительное значение, выделяется дело, которое касается предложения Конституционного Суда РА об организации референдума о доверии с целью преодоления острого противостояния внутри общества после результатов выборов Президента РА в 2003 году, которым была сделана

попытка предотвратить внутренние опасности, угрожающие государственности (постановление Конституционного суда РА от 16.04.2003года ПКС – 412).

В данной статье представлено предложение Конституционного суда РА об организации референдума доверия, адресованного политической власти РА. С этой целью анализируются позиции Конституционного суда РА, выраженные в решении ПКС 41216.04.2003г. Автор представляет государственное и конституционно-правовой анализ предложения Конституционного суда РА, а также последствия игнорирования этого предложения политической властью.

Избирательное право с целью скорейшего завершения поствыборных процессов и обеспечения нормальной деятельности государственного аппарата требует разрешения избирательных споров как можно быстрее и беспрекословно (сжатые сроки разрешения избирательных споров, неопротестованность актов, разрешающих избирательные споры по существу, сжатые сроки уничтожения архивов, относящихся к выборам и др.). Однако Конституционный суд РА, предложив организовать референдум доверия, отклонился от этой логики, потому что, хотя в формально-юридическом смысле избирательный спор разрешился, однако поствыборные процессы не завершились. Это отклонение от логики избирательного права оправдывается необходимостью установления гражданской солидарности и преодоления общественного противостояния.

Второй Президент РА, которому было предложено организовать референдум доверия, не принял предложение Конституционного Суда РА, и власти РА инициировали беспрецедентные нападения на Конституционный Суд РА. Второй Президент Армении спустя годы в своей книге, опубликованной в 2019 году, отмечает, что о референдуме доверия забыли, и эта история закончилась, однако, принимая за основу закон физики о сохранении и преобразовании энергии, можно сделать вероятное суждение о том, что, не организовав референдум доверия, эта история не закончилась, а было положено новое начало трагическим историям. После следующих выборов Президента РА, 1 марта 2008 года, открылась еще одна из постыдных страниц нашей истории: в Ереване были организованы массовые беспорядки и убиты десять человек. Общественное противостояние не разрешилось даже после событий 1 марта 2008 года. В 2018 году в Армении произошла смена власти (организаторы называют ее революцией), а ее угрозы сохранения государственности пока не раскрыты в полном объеме.

В результате проведенного анализа можно заключить следующее.

Предложение Конституционного суда РА об организации референдума доверия было основано на необходимости установления гражданской солидарности и преодоления общественного противостояния.

С первого взгляда, решение Конституционного суда ПКС-412 имеет внутреннее противоречие, так как, с одной стороны, подтвердил законность результатов выборов Президента РА, а с другой стороны – предложил организовать референдум доверия. В результате более глубокого изучения вопроса становится ясно, что в данном решении нет никакого внутреннего противоречия, так как Конституционный суд РА оценил два разных явления: с одной стороны – на основании процессуальных доказательств подтвердил легальность (законность) результатов выборов, с другой стороны – предложил выяснить легитимность власти посредством организации референдума доверия.

Невыполнение политической властью, с позитивно-правовой точки зрения, необязательного предложения по организации референдума доверия было упущенной возможностью самоконституционализации власти. Невыполнение данного предложения имплицитно углубило общественное противостояние, а для дальнейшего развития армянской государственности, и даже сохранения государственности, создало угрозы.

Ключевые слова: референдум доверия, конституционность, Конституционный суд РА, политическая власть.

**RA CONSTITUTIONAL COURT OFFERING TO ORGANIZE
A REFERENDUM OF TRUST AND LOST CHANCE FOR POLITICAL
POWER TO SELF-CONSTITUTION**

A. Ghambaryan

ABSTRACT

In the article is discussing the proposal of the RA Constitutional Court to organize a no-confidence referendum addressed to the RA political power. For that purpose, the decisions of the RA Constitutional Court dated 16-04-2003 are analyzed. The positions expressed by the SDO-412 decision.

The author presents the state-constitutional-constitutional significance of this proposal of the RA Constitutional Court, as well as the consequences of the political power ignoring this proposal.

Keywords: referendum of trust, constitutionality, RA Constitutional Court, political power.

DOI 10.48200/1829-0450_2021_3_97
УДК 4414

Поступила: 07.09.2021г.
Сдана на рецензию: 10.09.2021г.
Подписана к печати: 20.12.2021г.

ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԱՍ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Ա. Մ. Դավթյան

*Հայ-ռուսական համալսարան
a.m.davtian@gmail.com*

ԱՄՓՈՓՈՒՄ

Համայնապատկերի ազատություն հռչակելով՝ թույլտարվում է ոչ գույքային շահ հետապնդող անձանց որոշակի դեպքերում առանց հեղինակի թույլտվության և վարձատրության ազատ օգտագործել նրա ստեղծագործությունները: Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր կանոնով ստեղծագործության ազատ օգտագործումն իրականանում է ոչ գույքային նպատակներ հետապնդելով, ՀՀ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի «ազատ օգտագործման» ինստիտուտը չափից լայն էօգտագործում է սահմանել, ինչը բերել է այդ հոդվածի հետևանքով բազմաթիվ հեղինակների հեղինակային իրավունքների ոտնահարման:

Հիմնաբառեր ազատ օգտագործում, ազնիվ օգտագործում, հեղինակային իրավունք, միջազգային իրավունք, կոնվենցիա:

Մտավոր սեփականության իրավունքն ամենաարագ զարգացող իրավունքի ճյուղերից է և ինչքան արագ է զարգանում մտավոր սեփականության իրավունքը դրանից ավելի շուտ են «զարգանում» մտավոր սեփականության իրավունքի խախտման տարբերակները: Հայաստանի Հանրապետությունը այդ առումով «առաջատարներից է», ՀՀ-ում ֆենոմենալ շատ են մտավոր սեփականության իրավունքի խախտումները և, իհարկե, առկա են օրենսդրական թերություններ: Օրենսդրական թերություններից է՝ ազատ օգտագործման ինստիտուտի լայն օգտագործում է սահմանել, ինչի հետևանքով բազմաթիվ հեղինակների իրավունքներ խախտվում են:

Fair use-ը ամերիկյան իրավական դոկտրին է, որը նկարագրում է բացառիկ իրավունքի բացառություններ և սահմանափակումներ, որոնք տրամադրված են հեղինակին օրենքով: Այս դոկտրինի շրջանակներում թույլատրվում է հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի ազատ օգտագործումը՝ որոշակի պայմանների պահպանմամբ: Fair use տերմինը կիրառվում է միայն ԱՄՆ-ում, սակայն իրավունքի անզուսաքսոնական համակարգ ունեցող որոշ

երկրներում օգտագործվում է նման տերմին՝ «ազնիվ օգտագործում» (fair dealing)¹:

Ռումանո-գերմանական իրավական համակարգում և «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիայի» (այսուհետ նաև՝ Բեռնի Կոնվենցիա կամ Կոնվենցիա) միացած երկներում գործում է «ազատ օգտագործման» ինստիտուտը, որը որոշ դեպքերում թույլ է տալիս օգտագործել ստեղծագործողությունը առանց հեղինակյի թույլ տվության և իմացության:

Օրենքով հստակ սահմանվում են կոնկրետ դեպքեր, երբ թույլատրվում է ուրիշի ստեղծագործության ազատ օգտագործումը՝

1) ստեղծագործության օգտագործման եղանակը (վերարտադրումը, տարածումը և այլն),

2) օգտագործման նպատակը,

3) օգտագործման ոլորտը,

4) օգտագործման ծավալը [1]:

Սակայն, ՀՀ-ում «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի փոփոխություններից հետո «ազատ օգտագործում»-ը այնքան լայն հասկացություն է դարձել, որ գրեթե հավասարվել է հանրային սեփականության: Ստացվում է, որ de facto մտավոր սեփականության իրավունքի օբյեկտը այցելության համար բաց վայրում տեղադրելը վերածում է այն հանրային սեփականության:

Արտասահմանցի մասնագետները նշում են, որ «հատուկ դեպքեր» արտահայտությունն ունի երկու ասպեկտ : Նախ, բացառությունը չպետք է շատ լայն ձևակերպվի. ազատ օգտագործումը թույլատրվում է միայն կոնկրետ, հստակ սահմանված նպատակներով: Երկրորդ՝ նշված նպատակները նույնպես պետք է ունենան որոշակի առանձնահատկություններ՝ հիմնավորվեն հանրային ակնհայտ շահով կամ այլ բացառիկ հանգամանքով [2]:

Հայաստանի Հանրապետությունում 2006 թվականից գործում է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման թույլատրվում է ոչ առևտրային նպատակով վերարտադրել, հեռարձակել այցելության համար բաց վայրերում

¹ Երբեմն fair use տերմինը թարգմանվում է որպես «Ազնիվ օգտագործում» (см. Управление правами в области цифровой информации: практическое руководство. М.: Омега-Л, 2010. С. 58. С. 204), а fairdealing как «добросовестное использование» (см.: Бенгли Л., Шерман Б. Право интеллектуальной собственности: Авторское право. СПб.: Юридический центр Пресс, 2004. С. 338. С. 535).

տեղադրված ճարտարապետական, լուսանկարչական կամ կերպարվեստի ստեղծագործությունը [3]:

Մակայն 2013 թվականին «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-22-Ն ՀՀ օրենքով սույն հոդվածը ստացավ ուրիշ տեսք:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման թույլատրվում է փողոցներում, զբոսայգիներում, հրապարակներում և այցելության համար բաց այլ վայրերում մշտապես տեղադրված ստեղծագործությունների՝ ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևերով վերարտադրումը, հեռարձակումը, վերարտադրված օրինակների տարածումը, այդ թվում՝ համացանցի միջոցով»:

Որպեսզի պարզ լինի, թե ինչպես է պետք մեկնաբանել սույն հոդվածը, հարկավոր է կիրառել սկզբնաղբյուրից բխող մեկնաբանման կանոնը՝ այսինքն, պարզել օրենսդրի կամքը սույն փոփոխությունը կատարելու վերաբերյալ:

Պ-210-08.02.2013-ՊԻ-010/0 Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություն կատարելու մասին նախագծի համաձայն՝

Հոդված 1. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-142 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման թույլատրվում է փողոցներում, զբոսայգիներում, հրապարակներում կամ այցելության համար բաց այլ վայրերում տեղադրված ճարտարապետական, կերպարվեստի, լուսանկարչական կամ այլ ստեղծագործությունների **ոչ արևոտային նպատակով** ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևով վերարտադրումը, հեռարձակումը, ինչպես նաև վերարտադրված օրինակների տարածումը, այդ թվում՝ համացանցի միջոցով: Աշխատանքներն, որոնք ցուցադրված են հասարակության համար բաց հանրային հավաքածուներում, այն է՝ թանգարաններում, պատկերասրահներում և ցուցասրահներում կարող են վերարտադրվել միայն կատալոգների և տպագիր հրատարակությունների միջոցով, ինչպես նաև մամուլում, հեռուստատեսությամբ և համացանցում տեղեկատվության տրամադրման նպատակի սահմաններում [4]»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հեղինակային Իրավունքի և Հարակից Իրավունքների Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության մասին:

«Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը նպատակ է հետապնդում առավել հստակեցնել «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված հանրային այցելության համար բաց վայրերում տեղադրված ստեղծագործությունների օգտագործման կարգը՝ հաշվի առնելով ինչպես հեղինակների, այնպես էլ հանրության լայն շրջանակների շահերի գույակցումը [5]:

Ինչպես երևում է նախագծից և դրա հիմնավորումից, օրենսդրի կամքը իսկզբանե նախագծում եղել է նմանատիպ իրավունքի թույլտվությունը ոչ առևտրային նպատակով, հաշվի առնելով հեղինակների և հանրության շահերի գույակցումը:

Օրենքի ընդունումից հետո հոդվածը ստացել է այլ տեսք, սակայն միջազգային պրակտիկայում նմանատիպ հոդվածները չեն կարող և չեն մեկնաբանվում այնպես ինչպես դա արվում է Հայաստանի Հանրապետությունում, շեղվելով օրենսդրի կամքից: Սույն հոդվածը՝ համայնապատկերի ազատություն հռչակելով ի նկատի ունի ոչ գույքային շահ հետապնդելը, քանի որ հակառակ դեպքում հեղինակային իրավունքները ոտնահարվում են և անձի կողմից հեղինակային իրավունքի օբյեկտ ստեղծելն իմաստագրվում է, քանի որ ինչ-որ մեկը կարող այն վերարտադրել և եկամուտ ստանալ դրանով:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը [6]:

1886 թվականին ընդունվել է «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիան»: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 19-ից (հիմք՝ Մտավոր Մեփականության Համաշխարհային Կազմակերպության պաշտոնական կայքից (www.wipo.com) տեղեկատվություն):

Բեռնի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն

(Ստեղծագործությունների ազատ օգտագործման որոշակի դեպքեր. 1.

Մեջբերումներ,

2. Ուսուցման նպատակով պատկերագրումներ,

3. Սկզբնաղբյուրի և հեղինակի նշում)

(1) Թույլատրվում է մեջբերումներ կատարել ստեղծագործությունից, որն արդեն օրինական կարգով մատչելի է դարձել հանրությանը, պայմանով, որ դրանց կատարումը համատեղելի է արդար պրակտիկային, և դրանց ծավալը չի գերազանցում այն չափը, որն արդարացված է նպատակով, ներառյալ թերթերի հոդվածներից ու պարբերականներից մեջբերումները՝ մամուլի տեսությունների ձևով:

(2) Միության երկրների օրենսդրության և նրանց միջև կնքված կամ կնքվելիք հատուկ համաձայնագրերի իրավասությունն է թույլատրելու գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունների օգտագործումը՝ որպես պատկերազարդումներ հրատարակություններում, ռադիոհեռուստահաղորդումներում կամ ուսուցողական բնույթի ձայնագրություններում, կամ տեսագրություններում, նպատակով արդարացված ծավալով, պայմանով, որ այդպիսի օգտագործումը համատեղելի է արդար պրակտիկային:

(3) Ստեղծագործությունները սույն հոդվածի նախորդ կետերի համաձայն օգտագործելու դեպքում նշվում է սկզբնաղբյուրը և հեղինակի անունը, եթե այն նշված է այդ սկզբնաղբյուրում [7]:

«Բեռնի Կոնվենցիայի 10 bis հոդվածի համաձայն՝

(Ստեղծագործությունների ազատ օգտագործման հնարավոր լրացուցիչ դեպքեր.

1. Որոշակի հոդվածների ու հեռարձակված ստեղծագործությունների,
2. Ընթացիկ իրադարձությունների ժամանակ դիտված կամ լսված ստեղծագործությունների)

(1) Միության երկրի օրենսդրության իրավասությունն է թույլատրելու թերթերում կամ պարբերականներում հրապարակված տնտեսական, քաղաքական և կրոնական ընթացիկ հարցերով հոդվածների կամ հեռարձակված նույնաբնույթ ստեղծագործությունների վերարտադրությունը մամուլի, հեռարձակման կամ հաղորդագծով հանրությանը հաղորդելու միջոցով՝ այն դեպքերում, երբ այդպիսի վերարտադրությունը, հեռարձակումը կամ դրանց նման հաղորդումը հատկապես չի սահմանափակվել: Ամեն դեպքում, սկզբնաղբյուրը պետք է միշտ պարզորոշ նշվի. այդ պարտականությունը չկատարելու իրավական հետևանքները որոշվում են այն երկրի օրենսդրությամբ, որտեղ հայցվում է պաշտպանությունը:

(2) Միության երկրի օրենսդրության իրավասությունն է նաև որոշելու այն պայմանները, որոնց համաձայն լուսանկարչության, կինեմատոգրաֆիայի, հեռարձակման կամ հաղորդագծով հաղորդելու միջոցով ընթացիկ իրադարձությունները հանրությանը տեղեկացնելու նպատակով տվյալ իրադարձության ընթացքում դիտված կամ լսված գրական կամ գեղարվեստական

ստեղծագործությունները կարող են, տեղեկատվական նպատակով արդարացված ծավալով, վերարտադրվել և մատչելի դառնալ հանրությանը [8]:

Ստացվում է, որ Բեռնի կոնվենցիան չի նախատեսում ոչ մի դեպք, երբ անձը կարող է առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման թույլատրման փողոցներում, զբոսայգիներում, հրապարակներում և այցելության համար բաց այլ վայրերում մշտապես տեղադրված ստեղծագործությունների՝ ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևերով վերարտադրումը, հեռարձակումը, վերարտադրված օրինակների տարածումը կատարել առևտրային նպատակներով: Քանի որ Բեռնի կոնվենցիան Հայաստանի կողմից վավերացված միջազգային կոնվենցիա է, հակասությունների դեպքում կիրառվում են Բեռնի կոնվենցիայի դրույթները: Ստեղծագործությունների ազատ օգտագործման համար Կոնվենցիայում նախատեսված է սպառիչ ցանկ և երկներին չի տրվում իրավունք իրենց ներքին օրենսդրություններում նախատեսել ավելին, քան նախատեսված է Բեռնի կոնվենցիայում:

Իրավունքի ճանաչման անհրաժեշտությունը, որպես իրավունքի պաշտպանության ձև հայտնվում է այն իրավիճակում, երբ ինչ-որ մեկը հերքում է կամ ինչ-որ ուրիշ ձևով չի ընդունում իրավունքը, դրանով իսկ խախտելով իրավատիրոջ շահերը: Իրավունքի հերքումը կարող է լինել ինչպես վիճարկման կամ իրավունքը ուրիշին պատկանելու արձանագրման մեջ, նաև փաստացի ինչ-որ մեկի հեղինակային իրավունքների անտեսման մեջ [9]:

Հայաստանի Հանրապետության «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի սույն դրույթն ընդունվել է Բեռնի կոնվենցիային և Հայաստանի Հանրապետության կողմից իր վրա միջազգային համայնքում ստանձնած պարտավորությունների խախտմամբ: Չնայած նրան, որ օրենսդրի կամքը, ինչպես պարզ է դառնում նախագծից, չի հանդիսացել ստեղծել հնարավորություն առանց հեղինակի թույլտվության իր մտավոր սեփականության օբյեկտի վերամշակումը և դրանից եկամուտ ստանալը, Հայաստանի Հանրապետությունում պրակտիկան ցույց է տալիս, որ օրենքը գործում է այդ կերպ:

Ուսումնական տեքստի հետ աշխատանքում, ինչպես նկատում է Լ.Պ. Դոբլանը կարևորում է նյութի հասկացումը: Մեր ժամանակներում հասկացման խնդիրը քննարկվում է միջառարկայական պլանում: Ժամանակակից գիտության մեջ գոյություն ունեն հասկացման ուսումնասիրման առնվազն յոթ ուղղություններ՝ ա) մեթոդական, բ) իմացաբանական, գ) տրամաբանական, դ) իմաստային, ե) լեզվական, զ) հաղորդակցման և է) հոգեբանական (Լ.Պ. Դոբլան, Ն.Ի. Ժինկին, Ի.Ֆ. Նեվոլին, Ա.Ի. Չեստյակով, Գ.Ս. Դրիձե, Ա.Ս. Շտեռն, Վ.Բ. Ապոլիստին, Լ.Պ. Ռուդենկո) [4]:

Հոգեբանության մեջ «հասկացում» հասկացությունն օգտագործվում է լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով այն մեկնաբանվում է որպես օբյեկտիվ աշխարհի հետ մարդկային փոխազդեցության բոլոր հոգեբանական ասպեկտների (ընկալում, հիշողություն, լեզու և այլն) վերլուծության իմաստով [5]: Իսկ նեղ իմաստով հասկացումը միայն մտածողության, որպես առարկաների և երևույթների միջև էական կապերի և հատկությունների ընդհանրացված և միջնորդավորված արտացոլման բաղադրիչ է [6]: Լ.Պ. Դոբլանը ուսումնասիրում է տեքստի հասկացումը որպես նրանում թաքնված պրոբլեմային իրավիճակների հաջորդաբար որոշում [7]: Վ.Ս. Կարապետյանը «հասկացում» հասկացությունը դիտարկում է «Ընկալում-հասկացում-յուրացում» շղթայի վերլուծության տեսանկյունով: Հիմնական գաղափարն այն է, որ բանավոր կամ գրավոր տեքստի հասկացման գործընթացը կարող է վերձանվել որպես նպատակամետ գործողությունների պլանաչափ զարգացումներ, հիմնական պարամետրերի ձևաչափային փոփոխություններ [8]:

Արևմտյան հոգեբանության ներկայացուցիչ Դ.Ե. Ռումելիսը գրում է, որ տեքստում ներկայացված դրվագի հասկացումը ենթադրում է, որ ընթերցողը

պետք է լուծի հասկացման ենթակա դրվագի կառուցվածքի որոշման խնդիրը [9]: Նմանատիպ միտք են արտահայտում Ջ.Դ. Բրանսֆորդը և Ն.Ս. Մակկարելը [10]:

Հասկացման հիմքում ընկած են բառերի, տերմինների, հասկացությունների իմացությունը, նախադասության իմաստի հասկացումը, տեքստի իմաստային մասերի միջև կապերի հաստատումը [11]:

Ուսումնական գործունեությունը՝ որպես ամբողջություն, ներառում է տարբեր մակարդակի մի շարք յուրահատուկ գործողություններ և օպերացիաներ: Ի.Ի. Իլյասովը առաջին մակարդակի ուսումնական կատարողական գործողությունների թվին է դասում. ա) ուսումնական նյութի բովանդակության պարզաբանման գործողությունները, բ) ուսումնական նյութի մշակման գործողությունները [12]:

Ուսումնական տեքստերի հետ աշխատելիս հիմնականում առանձնացվում են հետևյալ մտավոր միկրոօպերացիաները [13]. 1) բովանդակության մեջ կողմնորոշումը, 2) հիմնական իմաստների բացահայտումը, 3) հիմնական իմաստների առանձնացումը և վերակառուցումը, 4) նյութի կրճատումը կամ ամփոփումը, 5) հիմնական իմաստների ամփոփմամբ սխեմայի կառուցումը:

Առաջին հայացքից թվարկված միկրոօպերացիաները հասկանալի են և կարող են հանգեցնել նյութի հասկացման, սակայն առաջադրանքի բուն կատարման ընթացքում է, որ սովորողները սխալվում են, նույնիսկ գործողությունների այգորիթմի առկայության պարագայում: Պատճառը թերևս այն է, որ մտավոր գործողությունները, մինչ ներքին պլանում կատարելը, պետք է հնարավորինս բացված սովորեցվեն արտաքին կամ առարկայական պլանում:

Ուսուցման ընթացքում կազմակերպվող կողմնորոշման ձևերն ու բովանդակությունը յուրացվող գործունեության միայն մի կողմն են: Նրա մյուս կողմը պետք է դիտարկվի որպես համատեղ, արտաքին և ծավալուն գործունեության փոխակերպում անհատական, ներքին, կրճատված գործունեության տեսքով: Գործունեության ինտերիորիզացիան ներքին պլան, որի արդյունքում առաջանում է զուտ մտավոր գործունեություն, յուրացման մեխանիզմի գլխավոր օղակն է:

Ուսումնական գործունեության ֆունկցիոնալ կառուցվածքում՝ նրա մեջ ներառված գործողությունների և օպերացիաների տեսակյունից, առանձնացնում են կողմնորոշիչ, բուն կատարման և վերահսկիչ բաղադրիչները: Էական նշանակություն ունի կողմնորոշիչ բաղադրիչը, որը ուսումնական գործունեության հոգեբանական բաղադրիչ է՝ շնորհիվ նրա երկու գործառույթի՝ ա) կառուցում է կողմնորոշիչ պատկեր և բ) կողմնորոշում է գործունեության սուբյեկտին նոր ուսումնական նյութի հետ առարկայական պլանում ինքնուրույն գործողություն կատարելիս:

Ընդ որում, ուսուցման զարգացնող ազդեցությունը, ըստ Պ. Գալպերինի, նրանում է, որ այն ձևավորում է սովորողի կողմնորոշման նոր եղանակներ, որոնցում օբյեկտներն արտացոլված են կեցության նոր, համընդհանուր ձևի մեջ: Այսպիսով, ուսուցումը ձևավորում է մտածողության «օպերատիվ» սխեմաներ [14], որոնք ներառում են կոնկրետ գործողություններ:

Գիտափորձի նպատակն է անհատական ուսուցման ընթացքում հարցազրույցի, կողմնորոշիչ և ուղղորդող հարցերի միջոցով «միջին» և «ցածր» ակադեմիական առաջադիմություն ունեցող ուսումնառողների մոտ ձևավորել ուսումնական տեքստերի ընկալմանը և հասկացմանը միտված գործողությունների համակազմ:

Հետազոտության վարկածը. ենթադրվում է, որ «միջին» և «ցածր» առաջադիմությամբ ուսանողների շրջանում ուսումնախմացական գործողությունների կոնկրետ համակազմի նպատակամետ ձևավորումը հանգեցնում է նրանց կողմից ակադեմիական տեքստի հասկացման (հասկացումը տվյալ պարագայում փաստվում է սովորողների կողմից մեծ թվով և անսխալ կատարված գործողությունների իրականացմամբ):

Ուսուցողական գիտափորձի խնդիրներն են.

ա) կազմել ուսուցողական ծրագիր և անհատական ուսուցման միջոցով ուսուցանել Ընդհանուր հոգեբանություն առարկայից ուսումնական տեքստի ընկալմանն ու հասկացմանն ուղղված ուսումնական գործողություններ,

բ) տարբեր ուսումնական տեքստերի վրա կիրառել ուսուցանված գործողությունները,

գ) գործողությունների տեսանկյունով վերարտադրել ընկալված և հասկացված նյութը (ստուգման դիտանկյուն),

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսանում Գործունեության համահոգեբանական տեսությունը (Ա.Ն. Լեոնտև, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ռ. Լուրիա և այլոք), Ուսումնական գործունեության կոնցեպցիան (Պ.Յա. Գալպերին, Ն.Ֆ. Տալիզինա, Տ.Վ. Գաբայ և այլոք), Ուսումնական գործունեության առանձին բաղադրիչների ակտիվացման մոտեցումը (Լ.Ս. Ֆրիդման, Ի.Ի. Իլյասով, Վ.Ս. Կարապետյան և այլոք), Ուսումնական տեքստերի հասկացման և յուրացման հոգեբանական պատկերացումները Լ.Ի. Կապլան, Լ.Պ. Դեբլան, Ն. Ի. Ժինկին, Տ. Մ. Դրիձե և այլոք:

Ուսուցողական գիտափորձի մեթոդիկան կազմված է նախնական և հիմնական մասերից, որոնք իրականացվել են բացատրական, բառարանային, անհատական, զրույցի, մեկնաբանման, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մեթոդներով:

Փորձարկվողների համակազմը: Ուսուցողական գիտափորձին մասնակցել են բնագիտական և հումանիտար հոսքերի «միջին» և «ցածր» ակադեմիա-

կան առաջադիմության թվով 38 ուսումնառողներ: Ուսուցողական գիտափորձերն ընթացել են փոքր խմբերով (ծրագրի նախապատրաստական փուլ) և անհատական (հիմնական փուլ):

Ուսուցողական գիտափորձի ընթացքը. Նախնական գիտափորձի անցկացման նկարագրություն: Առաջին պարապմունքներում բացատրման մեթոդով փոքր հետազոտական խմբերում ներկայացվել են մի շարք հասկացություններ, որոնք ուղղակիորեն առնչվում են ուսուցողական գիտափորձի հետ: Առաջին հերթին նկատի ունենք մի շարք հասկացություններ, որոնք օգտագործվում են ժամանակակից գիտության բոլոր բնագավառներում: Բացի դրանից, դրանք առնչվում են ուսումնագիտական տեքստերի հետ. «Կառուցվածք», «Համակարգ», «Հատկություն», «Սկզբունք», «Ամբողջ-մաս», «Պատճառ-հետևանք», «Ձև (արտահայտչաձև)-բովանդակություն», «Եզակին, առանձնահատուկը և ընդհանուրը», «Օրինաչափություն», «Գործընթաց», «Գործունեություն», «Երևույթ և էություն», «Գործառույթ», «Տեքստ», «Տեքստի տեսակներ», «Տեքստային օբյեկտ», «տերմին», «հասկացություն» էլակետային եզրույթների մասին պատկերացումների ձևավորման անհրաժեշտությունը: Վերոհիշյալ համագիտական եզրույթների յուրացումը և հասկացումը կհեշտացնի գործողությունների իմաստի պարզաբանումը: Իսկ հասկացման չափանիշը համանման գործողություններ պահանջող առաջադրանքների կատարումն է՝ հիմնական շեշտը դնելով ուսումնական նյութի ըմբռնման և հասկացման վրա:

Ուսուցողական գիտափորձի հիմնական փուլի բաղկացուցիչ մաս են կազմում.

1. Տեքստում ընդգրկված տերմինների և հասկացությունների իմաստի պարզաբանման գործողությունները,
2. «Տեքստային օբյեկտների», նրանց հատկությունների և գործառույթների հետ իրականացվող գործողությունները,
3. Տեքստի վերաձևակերպման գործողությունները,

Գիտափորձի մասնակիցներին առաջադրվել են ընդհանուր հոգեբանության թեմաներից ուսումնական տեքստեր, որոնք դասավանդվել են ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար հոսքերում: Փորձարկվողներին առաջարկվել է նախապես նրանց տրամադրված ուսումնական կողմնորոշիչ քարտերից օգտվելով ա) իրականացնել տեքստում ընդգրկված տերմինների և հասկացությունների իմաստի պարզաբանման գործողություններ, բ) «Տեքստային օբյեկտների», նրանց հատկությունների և գործառույթների հետ իրականացվող գործողություններ, գ) տեքստի վերաձևակերպման գործողություններ: Ենթադրելով, որ սկզբնական շրջանում կողմնորոշիչ հիմքի քարտից օգտվելը հեշտացնում է գործողությունների կատարման հաջորդականությունը առարկայական պլանում, հետզհետե ինտերիորիզացվելով՝ անցնելու է մտավոր պլան (մտավոր գործողություններ) և ավտոմատացվի:

Ստորև տրված է «Տեքստային օբյեկտների», նրանց հատկությունների և գործառույթների հետ իրականացվող գործողությունների կողմնորոշիչ հիմքի քարտի նմուշը, որը գիտափորձերի ողջ ընթացքում մեքենագրած տեսքով դրված է փորձարկվողի սեղանին, որպես գործողության կողմնորոշիչ հիմք:

Կողմնորոշիչ հիմքի քարտ

1. Ուշադիր կարդալ առաջին նախադասությունը և որոշել տեքստային օբյեկտը/ ները, այսինքն՝ որոշել, թե ինչի, ինչերի կամ ում մասին է առաջին նախադասությունը (կատարել ոչ թե քերականական, այլ իմաստաբանական վերլուծություն): Եթե տեքստային օբյեկտը հստակ չի ներկայացված, ապա հարցերի միջոցով հարկավոր է այն ընդլայնել:

2. Մինչ տեքստին ծանոթանալը վերհիշել տվյալ տեքստային օբյեկտի/ների մասին արդեն ունեցած պատկերացումները:

3. Որոշել տեքստային օբյեկտի/ների բնորոշման ձևը՝ ըստ հոգեբանության մեջ հաճախ օգտագործվող գործողությունների (սահմանել, ձևակերպել, մեկնաբանել բացահայտել, պարզել, ստուգել, ապացուցել, ենթադրել, համոզել, փաստարկել, մտահանգել, ուսումնասիրել, եզրակացնել և այլն):

4. Որոշել տեքստային օբյեկտի/ների ներկայացման ձևը (նկարագրություն է, թե բացատրություն):

5. Պարզել, թե ինչպես են միմյանց հետ կապվում տեքստային օբյեկտները (նմանատիպ կամ տարբերիչ գծերով, օրինաչափություններով և այլն):

6. Պարզել տեքստային օբյեկտի/ների կառուցվածքը, հատկությունները, գործառույթները:

7. Բացահայտել նկարագրված տեքստային օբյեկտի հատկությունների այն հնարավոր կապերը, որոնք բնորոշում են տվյալ տեքստային օբյեկտին/ներին:

8. Որոշել՝ տեքստային օբյեկտի/ների հատկությունները տրված են ամբողջությամբ, թե մասամբ:

9. Առանձնացնել այլ հեղինակների տեսական և գործնական բնորոշումները տվյալ տեքստային օբյեկտի/ների և դրանց նկարագրության մասին:

10. Որոշել այն գործոնները, որոնք ազդում են տվյալ տեքստային օբյեկտի/ների վրա:

11. Պարզել տեքստային օբյեկտի/ների հատկությունների դրսևորման պայմանները:

12. Բացահայտել տեքստի առանձին պարբերությունների ուղղակի կամ թաքնված կապերը:

13. Բացահայտել, թե առաջին պարբերության տեքստային օբյեկտները մյուս պարբերություններում ինչպես են հանդես գալիս որպես այլ տեքստային օբյեկտի բաղադրիչ, հատկանիշ, գործառույթ, գործոն և այլն:

Ստորև ներկայացվում է ուսուցողական գիտափորձի այն հատվածը մեկ փորձարկվողի օրինակով, երբ իրականացվում է «Գործունեության կառուցվածք» թեմայի հասկացմանը միտված տեքստային օբյեկտների հետ աշխատանք:

«Գործունեությունը իրականության նկատմամբ ակտիվ վերաբերմունքի այն ձևն է, որի միջոցով իրական կապ է ստեղծվում մարդու և այն աշխարհի միջև, որտեղ նա ապրում է: Գործունեության միջոցով մարդը ազդում է բնության, իրերի և այլ մարդկանց վրա: Այդ գործողություններում իրականացնելով և բացահայտելով իր ներքին որակները, իրերի նկատմամբ նա հանդես է գալիս որպես սուբյեկտ, իսկ մարդկանց նկատմամբ՝ որպես անձնավորություն: Իր հերթին նրանց պատասխան ազդեցություններին ենթարկվելով, այդ կերպ նա ի հայտ է բերում մարդկանց, իրերի, բնության և հասարակության իրական, օբյեկտիվ և էական հատկությունները»:

Ստորև ներկայացնենք գիտափորձի այն հատվածը, որոնցում տարանջատվեն տեքստային օբյեկտների հետ կատարվող ուսումնաիրացական մի շարք գործողություններ:

Հետազոտող – Ուշադիր կարդացեք առաջին նախադասությունը և կողմնորոշիչ քարտը, այնուհետև որոշեք, թե ինչի մասին է առաջին նախադասությունը: Ի՞նչ էք կարծում առաջին նախադասության ձևակերպումը դիտարկման քարտի ո՞ր հարցադրմանն է համապատասխանում:

Փորձարկվող Գ.Ս. - Խոսքը գործունեության մասին է և պատասխանում է ինչ հարցին...

Հ. – Կրկին ուշադիր նայեք նախադասությանը և որոշեք, թե ինչպես է նկարագրվում կամ բացատրվում «գործունեություն» կատեգորիան: Մի մտածեք ճիշտ թե սխալ է ներկայացված կատեգորիան այդ նախադասության մեջ: Բավարարվեք միայն սույն տեքստի բովանդակությամբ և շրջանակներով...

Փ. (Գ.Ս.) – Պատասխանում է ինչով հարցին (ցույց է տալիս միջոց) և գործունեությունը դիտարկում է որպես միջոց...

Հ. – Ինչի՞ միջոց է ներկայացվում...

Փ. (Գ.Ս.) – Ինձ թվում է, որ կապի միջոց...

Հ. – Ինչերի՞ միջև կապի միջոց է ...

Փ. (Գ.Ս.) – Մարդկանց և աշխարհի կապի միջոց է ...

Հ. – Ինչպե՞ս էք հասկանում մարդու և աշխարհի կապը: Ինչպե՞ս կներկայացնեք կապը այլ բառերով: Հաշվի առեք, որ մարդու բնորոշումները շատ են. հումանիտար գիտությունների մեջ տարբեր սահմանումներ են բերվում, բայց այստեղ հասկացվում են որպես աշխարհի հետ հարաբերություններ հաստատող էակ...

Փ. (Գ.Ս.) – Կապը հարաբերություն է, առնչություն...

Հ. – Այսպիսով ի՞նչ պարզվեց...

Փ. (Գ.Ս.) – Պարզվեց, որ գործունեությունը մարդուն և միջավայրին կապող օղակ է ...

Հ. – Տեքստից երևում է, թե որ գործունեության մասին է խոսքը...

Փ. (Գ.Ս.) – Կարևոր չէ, խոսքը վերաբերում է ընդհանրապես գործունեությանը...

Հ. – Օրինակ, եթե լիներ աշխատանքային գործունեություն, այս դեպքում այդ կապն ինչպե՞ս կարտահայտվեր...

Փ. (Գ.Ս.) – Աշխատանքային գործունեությունն ուղղված է աշխատանքային գործիքների ստեղծմանը՝ սեփական կարիքները հո՛ւալու համար...

Հ. – Այժմ կարդացեք հաջորդ նախադասությունը և որոշեք, թե ում կամ ինչերին է ուղղված այդ կապը...

Փ. (Գ.Ս.) – Այդ կապն ուղղված է ոչ միայն իրերին, այլ մարդկանց և բնությանը...

Հ. – Անցնելով երրորդ նախադասությանը՝ որոշեք, թե ինչի՞ մասին է այն...

Փ. (Գ.Ս.) – Այն վերաբերում է մարդուն...

Հ. – Ինչպե՞ս է մարդը ներկայանում այստեղ...

Փ. (Գ.Ս.) – Մի դեպքում ներկայանում է որպես սուբյեկտ, մյուս դեպքում՝ որպես անձնավորություն...

Հ. – Ո՞ր դեպքում է ներկայանում որպես սուբյեկտ, ո՞ր դեպքում՝ որպես անձնավորություն...

Փ. (Գ.Ս.) – Որպես սուբյեկտ հանդես է գալիս իրերի նկատմամբ հարաբերություններում, իսկ մյուս մարդկանց հետ՝ որպես անձնավորություն...

Հ. – Ի՞նչ է տեղի ունենում այդ հարաբերությունների արդյունքում...

Փ. (Գ.Ս.) – Սուբյեկտը բացահայտում է իր հատկություններն ու որակները...

Հ. – Իսկ չորրորդ նախադասության մեջ ինչի՞ մասին է խոսքը...

Փ. (Գ.Ս.) – Հատկանիշների մասին է ...

Հ. – Ո՞ր հատկանիշների...

Փ. (Գ.Ս.) – Իրական, օբյեկտիվ և էական...

Հ. – Իսկ ինչի՞ն են վերաբերում այդ հատկանիշները...

Փ. (Գ.Ս.) – Այդ հատկանիշները վերաբերում են այլ մարդկանց, իրերին, հասարակությանը և բնությանը...

Հ. – Ո՞վ է ի հայտ բերում այդ հարաբերությունները...

Փ. (Գ.Ս.) – Սուբյեկտը կամ անձնավորությունը...

Հ. – Իսկ ինչպե՞ս է ի հայտ բերում...

Փ. (Գ.Ս.) – Նրանց հետ հարաբերություններում նրանց պատասխան ազդեցությանը ենթարկվելով...

Հ. – Այսպիսով, մարդու և միջավայրի փոխազդեցության արդյունքում ի՞նչ է տեղի ունենում...

Փ. (Գ.Ս.) – Ինչպես սուրբեկտի, այնպես էլ այլ մարդկանց, բնության, իրերի և հասարակության էական հատկանիշների բացահայտում...

Հ. – Այսպիսով, ի՞նչ տեղի ունեցավ մարդու ներքին և արտաքին առարկայական աշխարհում...

Փ. (Գ.Ս.) – Տեղի ունեցան փոփոխություններ: Այո, մարդու ներքին ճանաչողական աշխարհում տեղի ունեցավ արտաքին առարկայական աշխարհի և իր մասին նոր պատկերացումների ձևավորում, իսկ արտաքին առարկայական աշխարհը փոխվեց և հարմարեցվեց մարդու սեփական պահանջներին:

Այսպիսով, բացահայտվում են հետևյալ կոնկրետ գործողությունները. ա) Տեքստային օբյեկտի բացահայտում, բ) Տեքստային օբյեկտի ներկայացման ձևի որոշման գործողություններ, գ) Տեքստային օբյեկտի հատկությունների որոշման գործողություններ, դ) Տեքստային օբյեկտի կատարած գործառույթների որոշման գործողություններ:

Այսպիսով, գիտափորձի այս դրվագը ցույց է տալիս, որ պետք է պարզել հասկացությունների առնչությունները ոչ միայն շարադրված նյութի սահմանում, այլ ընդլայնված հարաբերություններով: Հակառակ դեպքում ուսումնառողի մոտ նյութը շարադրվում է վերարտադրման մակարդակով, կրկնվում է:

Ստացված արդյունքները և դրանց քննարկումը. Փորձարարական և ստուգիչ խմբերում ուսուցողական ծրագրի արդյունքների համեմատության նպատակն է պարզել, թե այն փորձարկվողները, ովքեր մասնակացել են ուսուցողական գիտափորձերին, կարո՞ղ են իրականացնել ուսումնական տեքստերի հետ նախադասության միկրովերլուծությանը միտված գործողություններ:

Ստուգիչ և փորձարարական խմբերի համակազմերի հավասարաթեքությունը ապահովելու նպատակով հաշվի են առնվել հետևյալ պահանջները.

ա) Ուսումնառության նույն տարեթիվը,

բ) Նախնական ծանոթությունը ուսումնասիրվող թեմաներին,

գ) Խմբերի ընդհանուր թվաքանակի պահպանումը (աղջիկների և տղաների թվաքանակը տարբեր է, քանի որ կուրսերում տղաները քիչ են),

դ) Հաշվի են առնվել տարբեր առաջադիմությանը ուսումնառողների թվաքանակները,

ե) Երկու խմբերում էլ տեքստերը և հրահանգները նույնն են:

Ստուգիչ գիտափորձի փորձարկվողների համակազմի նկարագրությունը:

Ստուգիչ գիտափորձին մասնակցել են հումանիտար և բնագիտական հոսքերի 76 ուսումնառող. փորձարարական խումբ՝ «միջին» առաջադիմության 27, «ցածր» առաջադիմության 11 ուսումնառող, ստուգիչ խումբ՝ «միջին» առաջադիմության 27, «ցածր» առաջադիմության 11 ուսումնառող:

Ստուգողական գիտափորձերում արդյունքները գնահատվել են՝ ըստ ճիշտ կատարած գործողությունների թվաքանակի (յուրաքանչյուր գործողություն գնահատվել է մեկ միավորով): Գիտափորձի մասնակիցների կողմից

տեքստերի միկրովերլուծությունը կազմակերպվել է անհատական եղանակով: Ժամանակի սահմանափակում չի արվել՝ հաշվի առնելով փորձարկվողների անհատական ոճը, առանձնահատկությունները:

Նպատակահարմար է համեմատությունը կատարել միջինացված տվյալների հենքի վրա՝ ընդունելով այն որպես միավոր:

Գիտափորձի մասնակիցների կողմից կատարված գործողությունները հաշվարկվել են, այնուհետև դուրս է բերվել մեկ ուսանողի միջինացված տվյալները, այդ պատճառով այդ թիվը կարող է լինել կոտորակային մասով:

Գիտափորձի մասնակիցներին առաջարկվել է մեկ էջ ծավալով տեքստ ընդհանուր հոգեբանություն առարկայից: Նախապես փորձագետների կողմից հաշվարկվել են տեքստային օբյեկտները (17), տեքստային օբյեկտների բնութագրումները (կազմություններ, կառուցվածքներ, դասակարգումներ, խմբավորումներ) (18), տեքստային օբյեկտների հատկությունները (16), տեքստային օբյեկտների գործառույթները (4) և տեքստային օբյեկտների կապերը (39), որպեսզի հետագայում համեմատվի ուսանողների պատասխանների համապատասխան չափաբաժինների հետ:

Հետազոտվողներին տրվել է տեքստ և հրահանգվել առանձնացնել վերը թվարկված պարամետրերը հետևյալ հաջորդականությամբ. ա) տեքստային օբյեկտներ, բ) տեքստային օբյեկտի բնութագրում (սահմանումներ, կառուցվածքներ, դասակարգումներ), գ) տեքստային օբյեկտների հատկություններ, դ) տեքստային օբյեկտների գործառույթներ, ե) տեքստային օբյեկտների կապեր³ յուրաքանչյուրի դիմաց գրելով իրենց կողմից կատարած գործողությունների թվերը, որոնք էլ համեմատվել են փորձագետների համապատասխան թվերի հետ:

Աղյուսակ 1-ում երևում է, որ փորձարարական խմբի միջինացված տվյալները փորձագետների կողմից առանձնացված տվյալների համեմատությամբ տատանվում են 40–72,5%-ի սահմաններում, իսկ ստուգիչ խմբի մոտ՝ 21,8–32%-ի սահմաններում:

Աղյուսակ 1.

Տեքստային օբյեկտների ըմբռնման և հասկցման գործողություններ

Գիտափորձի խմբեր	Փորձ. թիվը	Ակադ. առաջ.	Տեքստային օբյեկտների ըմբռնման և հասկցման գործողություններ				
			Տեքստային օբյեկտների առանձնացման գործողություններ	Տեքստային օբյեկտների բնութագրման գործողություններ	Տեքստային օբյեկտների հատկությունները	Տեքստային օբյեկտների գործողությունները	Տեքստային օբյեկտների կապերը
Փորձ. խումբ n = 38	n = 27	միջին	332	296	284	78	762
		Մեկ փորձ. միջին. տվյալներ միավորներով	12.3	11	10.5	2.9	28.2
	n = 11	ցածր	89	79	83	21	204
		Մեկ փորձ. միջին. տվյալներ միավորներով	8.1	7.2	7.5	1.9	18.5
Մտուցիչ խումբ n = 38	n = 27	միջին	147	156	138	3,5	337
		Մեկ փորձ. միջին. տվյալներ միավորներով	5.4	5.7	5.1	1.3	12.4
	n = 11	ցածր	43	46	39	10	98
		Մեկ փորձ. միջին. տվյալներ միավորներով	3.9	4.2	3.5	0.9	8.9

Ամենից շատ առանձնացված են տարաբնույթ կապեր հաստատող ուսումնական գործողությունները (762), որոնք վերաբերում են հատկություններին, կառուցվածքային բաղադրիչներին և գործառույթներին: Տեքստային օբյեկտների բնութագրիչ գործողությունները (296) հանդես են եկել օբյեկտների նկարագրման, սահմանման ձևով, որոնք թվային առումով զիջում են տեքստային օբյեկտների առանձնացման գործողություններին (332): Վերջիններս տեքստի տարբեր մասերում կարող են կրկնվել և այդ պատճառով նրանք հաշվարկել են յուրաքանչյուրը մեկ անգամ: Տեքստային օբյեկտ կարող են լինել ոչ միայն

առանձին հասկացությունները, այլև առանձին դեպքերում հատկությունները: Վերոհիշյալը վերաբերում է «միջին» առաջադիմությամբ ուսանողներին, չնայած նմանատիպ կախվածություններ նկատվում են նաև «ցածր» առաջադիմությամբ ուսանողների ուսումնական գործողություններում:

Համեմատելով փորձարարական և ստուգիչ խմբերի սլյալները՝ կարելի է եզրակացնել, որ.

1. Ուսումնական տեքստերի հասկացմանը միտված ձևավորող գիտափորձի արդյունքում փորձարարական խմբի սովորողներն ավելի մեծ թվով գրեթե կրկնակի անգամ, գործողություններ սկսեցին իրականացնել:

2. Ստուգիչ խմբի սովորողները նույն հրահանգի պայմաններում կատարեցին ավելի շատ սխալներ:

3. «Ցածր» և «միջին» ակադեմիական առաջադիմությամբ սովորողների շրջանում ուսումնական տեքստերի հասկացում կարելի է ապահովել՝ սովորեցնելով նրանց գործողությունների վերոհիշյալ ալգորիթմը, որոնք, ըստ էության, հանդես են գալիս մտավոր գործողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ.*, Կոմպլեքսային ձևավորման ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում, Եր., 2010, 110 էջ:
2. *Graesser A.C.* An introduction to strategic reading comprehension. In D. McNamara (Ed.), Reading comprehension strategies: Theories, interventions, and technologies Mahwah, NJ: LEA, 2007. P. 6.
3. <https://ru.wikipedia.org/wiki/Текст>
4. *Знаков В.В.* Основные направления исследования понимания в зарубежной психологии // *Вопр. психол.* 1986. № 3. СС. 163–170.
5. *Cognition and symbolic processes / Ed. by Weimer W.B., Palermo P.S.* New Jersey, 1974. - PP.231–261.
6. *Доблаев Л.П.* Смысловая структура учебного текста и проблемы его понимания. М., 1982. 176 с.
7. Նույն տեղում:
8. *Կարապետյան Վ.Ս.* Ուսումնական նյութի ըմբռնման, հասկացման և յուրացման առանձնահատկությունները. Եր.: 2000, 96 էջ:
9. *Basic processes in reading: Perception and comprehension / Ed. By Laberge D., Samuels S. J.* New Jersey, 1977. PP. 265–303.
10. *Cognition and symbolic processes / Ed. by Weimer W.B., Palermo P.S.* New Jersey, 1974. PP. 231–261.
11. *Доблаев Л.П.* Смысловая структура учебного текста и проблемы его понимания. М., 1982. 176с.
12. *Ильясов И.И.* Структура процесса учения. М.: Изд-во МГУ, 1986. 200с.
13. *Турчин А.С.* Психологические условия организации процесса восприятия и понимания учебных текстов // *Психол. журн.* 2004. № 6. СС. 14–19.
14. Նույն տեղում:

ФОРМИРОВАНИЕ УЧЕБНЫХ ДЕЙСТВИЙ, НАПРАВЛЕННЫХ НА ПОНИМАНИЕ УЧЕБНЫХ ТЕКСТОВ

М.А. Келоян

АННОТАЦИЯ

В статье проведен анализ различных подходов к проблеме понимания учебных текстов. Была разработана программа обучающего эксперимента, направленная на понимание этих текстов, методологической основой которой послужил деятельностный подход. Были представлены и обсуждены процесс обучающего эксперимента, а также результаты контрольного эксперимента.

Цель эксперимента: в процессе индивидуального обучения сформировать у обучающихся со «средним» и «низким» академическим уровнем успеваемости совокупность действий, направленных на восприятие и понимание учебных текстов посредством собеседования, ориентирующих и направляющих вопросов.

Гипотеза исследования: предполагается, что целенаправленное формирование у обучающихся со «средним» и «низким» академическим уровнем успеваемости конкретной совокупности учебно-познавательных действий приводит к пониманию ими академического текста (подтверждением понимания должно служить осуществление учащимися большого количества безошибочных действий).

Задачи обучающего эксперимента:

- а) составить учебную программу и посредством индивидуального обучения сформировать у студентов действия, направленные на восприятие и понимание содержания учебных текстов по предмету *Общей психологии*;
- б) применять изученные действия к различным учебным текстам;
- в) воспроизвести воспринятый и понятый материал с точки зрения действий (аспект контроля).

Методика обучающего эксперимента состоит из предварительной и основной частей, которые осуществлялись методом объяснительных, словарных, индивидуальных бесед, комментариев, а также организацией самостоятельных работ.

В обучающем эксперименте участвовали 38 студентов с естественнонаучного и гуманитарного потоков со «средней» и «низкой» академической успеваемостью. Обучающие эксперименты проводились в малых группах (подготовительный этап программы) и индивидуально (основной этап).

Участникам эксперимента были заданы учебные тексты по теме общей психологии, которые изучались в обоих потоках. Испытуемым было предложено с помощью заранее предоставленных им ориентирующих карт осуществить: а) действия по разъяснению смысла терминов и понятий, включенных в текст; б) действия с «текстовыми объектами», их свойствами и функциями; в) действия по перефразированию текстов. Предполагается, что на начальном этапе использование карт, как ориентировочную основу действий, облегчает последовательность выполнения действий в предметном плане, постепенно интериоризируется, переходя в умственный план (умственные действия) и автоматизируется.

В контрольном эксперименте принимали участие: экспериментальная группа – 27 студентов со «средней» и 11 студентов с «низкой» успеваемостью; контрольная группа – 27 студентов со «средней» и 11 студентов с «низкой» успеваемостью.

В контрольной группе результаты оценивались по количеству правильно совершенных действий (каждое действие оценивалось в один балл). Микроанализ текстов, проведенный участниками эксперимента, организован индивидуальным способом. Учитывая индивидуальный стиль, особенности испытуемых, ограничений во времени не было.

Целесообразно проводить сравнение на базе усредненных данных, принимая его в качестве единицы.

Были подсчитаны действия, проведенные участниками эксперимента, затем выведены усредненные показатели одного студента, по этой причине это число может иметь дробную часть.

Испытуемым был предоставлен текст с объемом в одну страницу по предмету «Общая психология». Предварительно экспертами были подсчитаны текстовые объекты (17), характеристики текстовых объектов (состав, структура, классификация, группировка) (18), свойства текстовых объектов (16), функции текстовых объектов (4) и связи текстовых объектов (39), чтобы в последствии сравнить с соответствующими показателями ответов студентов.

Усредненные показатели экспериментальной группы при сравнении с выделенными данными экспертов варьируются в пределах 40–72,5 %, а у контрольной группы - в пределах 21,8–32 %.

Сравнивая данные экспериментальной и контрольной групп, можно прийти к следующим выводам:

1. В результате формирующего эксперимента, направленного на понимание учебного текста, участники экспериментальной группы стали осуществлять намного больше (почти в два раза) действий.
2. При тех же инструкциях участники контрольной группы сделали больше ошибок.
3. Можно обеспечить понимание учебных текстов студентами с «низкой» и «средней» академической успеваемостью, научив их пользоваться вышеупомянутым алгоритмом действий, которые, по своей сути, выступают как умственные действия.

Ключевые слова: учебный текст, понимание текста, учебные действия, текстовые объекты, свойства и функции объектов.

FORMATION OF LEARNING ACTIONS AIMED AT READING COMPREHENSION

M. Keloyan

ABSTARCT

The article analyzes different approaches to the problem of reading comprehension. A program of a training experiment was developed, aimed at understanding educational texts, the methodological basis of which was the activity approach. The process of the training experiment was presented and discussed, as well as the results of the control experiment.

Keywords: academic text, text comprehension, learning actions, text objects, object features and functions.

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

DOI 10.48200/1829-0450_2021_3_132
УДК 1751

Поступила: 29.11.2021г.
Сдана на рецензию: 01.12.2021г.
Подписана к печати: 23.12.2021г.

**ՔԱՌՍՈՒՆ-ՃՈՒՂ ԾԱՍ ԴԵՂՁՈՒՆԻ ԿԵՐՊԱՐՈՒ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ
ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ՆՐԱ ԶՈՒԳՈՐԴՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

**Ն.Մ. Իսկանդարյան¹, Վ.Ռ. Գրիգորյան²,
Ա.Հ. Առաքելյան³, Ա.Ա. Քոսյան³**

*Հայ-ռուսական համալսարան¹, Գավառի պետական համալսարան²,
Երևանի պետական համալսարան³
naira.iskandaryan@rau.am, vachik_grigoryan@mail.ru,
arakelyan48@yandex.com, kosyananush97mail.ru*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական «Մասնա ծներ» էպոսի ուսումնասիրությունը կերպարների արքետիպերը վերհանելու և նորովի բացահայտելու մեծ հնարավորություններ է ընձեռում: Ազգային էպոսը թերևս առաջին հայելին է, որի մեջ ազգը կարող է իրեն տեսնել: Հողվածում փորձ է արվում վերհանել «Մասնա ծներ»-ի կին հերոսներից մեկի՝ Դեղձուն Ծամի (ոսկե հյուսերով աղջկա) կերպարի դիցաբանական ակունքները և ցույց տալ, թե ինչ ընդհանրություններ կան նրա և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների միջև:

Հիմնաբառեր՝ էպոս, «Մասնա ծներ», համաշխարհային առասպելաբանություն, արքետիպեր:

“Подобно счастливым семьям,
все мифы и спасенные миры
похожи друг на друга”.
Джозеф Кэмпбелл

«Մասնա ծներ» հայ ժողովրդական էպոսի հետազոտությունն անվերջ հնարավորություններ է ընձեռում արքետիպային կերպարները նորովի լուսաբանելու և բացահայտելու: Ինչպես նշում է Ա. Եղիազարյանը. «Ժողովուրդները ճանաչում են իրենց և իրենց անցած ճանապարհը լարված ու անընդհատ որոնումների միջոցով: Եվ ազգային էպոսը, թերևս, այն առաջին հայելին է, որի մեջ ժողովուրդը պետք է տեսնի իրեն» [1]: Շարունակելով ինքնաճանաչման

անընդհատական գործընթացը՝ հետազոտության նյութ ենք դարձրել էպոսի կին հերոսներից Դեղձունի կերպարը: Անվիճելի է, որ էպոսում կանայք ծանրակշիռ դերակատարում ունեն, և նրանց կերպարների ու գործողությունների շարժառիթների համակողմանի ուսումնասիրությունը հնարավորինս մեծացնում է գլխավոր հերոսների նկարագրի ամբողջական պատկերացումը:

Այն, որ Դեղձունը վաղնջական ժամանակների մի դիցուհու հեռավոր արձագանքն է՝ էպոսում նշանակալի դերակատարում ունեցող կանանցից մեկի կերպարում մարմնացում գտած, ապացուցված փաստ է: Որտե՞ղ է ակունքը, որտեղի՞ց են ծագում առասպելական ընդհանրությունները տարբեր ժողովուրդների ավանդույթներում: Էլիադեն գտնում է, որ մարդկության մանկությունից են գալիս բոլոր առասպելները. «Миф излагает сакральную историю, повествует о событиях, произошедшем в достопамятные времена «начала всех начал» [2]: Դեղձունի դիցաբանական մի շարք հատկություններ և աշխարհի ժողովուրդների առասպելական մտածողության մեջ նրա հետ զուգադրվող այլ կերպարների ընդհանրությունները մտածելու տեղիք են տալիս, թե դրանք ընդհանուր արքեստիպերի արդյունք կարող են դիտվել: Իսկ «արքեստիպերը՝ «կոլեկտիվ անգիտակցական», որոշ չափով կենսաբանորեն, գենետիկորեն պայմանավորված սխեմաներ են, որոնց հիման վրա էլ ձևավորվում են աշխարհի ժողովուրդների՝ իրար այնքան նման առասպելական կերպարները և մոտիվները...» [3]: Ամերիկացի հայտնի գրող և առասպելաբան Ջոզեֆ Բեմպբելը ընդհանրացրել է, թե առասպելները մարդկության հավերժական ուղեկիցներն են, նրա հավաքական, կոլեկտիվ երագների արտացոլումը: Առասպելաբանությունը ժամանակակից մտածողների կողմից մեկնաբանվել է որպես արխայիկ ժամանակների բանաստեղծական երևակայության արդյունք՝ «неверно понятый последующими эпохами (Мюллер), как коллективное сновидение, симптоматическое проявление архетипических побуждений, исходящих из глубин человеческой души (Карл Юнг), как хранилище аллегорических указаний дающий возможность личности существовать в своей группе (Дюркгейм)» [4].

Տարբեր ժողովուրդների առասպելական մտածողության շատ և շատ դրվագներ համընկնում են և պարտադիր չէ ու միշտ չէ, որ այդ համընկնումները փոխառության արդյունք լինեն: Այդ ընդհանրությունները պատճառաբանված են: Ռուս հայտնի բանագետ Մելետինսկին գտնում է, թե էպիկական ստեղծագործություններում ընդգծված մի շերտ կա, որը արխայիկ դարաշրջանի պատկերացումների մեկ աղբյուրից է սնվում: «Отношение к фольклорным текстам как к “эху давних времен” легло в основу научной фольклористики с самого ее возникновения. Скажем, с одной стороны, в эпическом конфликте удерживаются воспоминания о действительных исторических событиях (битва на Куркушетре в “Махабхарате”, троянская война в “Илиаде”, сражение в Ронсевальском ущелье в “Песни о Роланде”, Сасунское восстание против Халифата в армянском эпосе, татаро-монгольское нашествие в русской былине и т.д.), однако,

чем дальше, тем яснее становилось, что реально традиция доносит до нас не *столько информацию о прошлом, сколько матрицы общественного сознания, зачастую имеющие мифологический генезис* (точнее, исторические воспоминания, отобранные и структурированные сообразно данным матрицам)» [5].

Ահա այս ընդհանրական մտեցման պրիզմայով էլ նախատեսում ենք քննության առնել Քառսուն-Ճյուղ Ծամ Դեղձունի կերպարի ուսումնասիրությունը, քանի որ «Էպոսը պետք է քննել համաշխարհային էպիկական ժառանգության համատեքստում, իբրև այդ ժառանգության մի մասը, աշխարհի մյուս էպոսների հետ ունեցած ամենատարբեր առնչություններով» [6]:

Էպոսի առաջին ճյուղում Դեղձուն Ծամն ու Ծովինարը դիցաբանական առումով լրացնում են միմյանց՝ որպես ջրի և արևի համապատասխան տարերքի մարմնացումներ: Մասնավորապես, այս կերպարի դիցաբանական ծագման մասին է խոսում հենց անունը՝ Քառսուն-Ճյուղ Ծամ, որը կապվում է առասպելական կերպարներին բնորոշ *ծամերի առասպելի* հետ (հմմտ.՝ վրացական ավանդության մեջ Դալի դիցուհին իր ծամերով հերոսին գամում է քարին [7], հայ առասպելաբանության մեջ Շամիրամն իր ծամերով քար է նետում [8], բասկերի ավանդության մեջ լամիները թովում են անցորդներին իրենց ոսկեգույն մազերը սանրելով [9] և այլն):

Հայ ժողովուրդն իր էպիկական մտածողությամբ Մասնա հիմնադիր ու սիրելի հերոսների կողքին պետք է պատկերեր ֆիզիկական և գերբնական հավասարազոր հատկություններով օժտված կանանց՝ նրանց շնորհելով նաև համապատասխան հոգևոր ու մտավոր ունակություններ: Դավիթը հաղթանդամ էր ու հզոր, նրա կնոջ՝ Խանդութի մասին նույնպես նման պատկերացում պիտի պահպանված լիներ ժողովրդի առասպելական մտածողության մեջ: Հայաստանում շրջագայող 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենեյրոն և Մեստրե Աֆոնսոն վկայում են, թե լսել են սասունցիներից, որ «նա (Խանդութը) ոտքերին կրել է, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր գլխով ու մարմնով դրանց միջով անցնել» [10]:

Քառսուն-Ճյուղ Ծամ Դեղձունը (պատումներից մի քանիսում նա հանդես է գալիս տարբեր անուններով, այսպես՝ հայոցձորցի Թառո Կազարյանի պատմած տարբերակում նրա անունը Սուռաթ է) ապրում է կախարդական երկրում՝ Քաջանց թագավորությունում: Էպոսում շեշտվում է, որ «քաջանց երկիր հմայքի երկիր է», օտար երկիր է: Դեղձունը, որոշ պատումներում էլ Խանդութ խանումը, հաճախ հիշատակվում են որպես այլազգիներ. նրանք հայ չեն: «Այս հանգամանքը օտարոտի չպիտի թվա, քանի որ այն դարաշրջանում այլադավան, խառն ամուսնությունները սովորական էին» [11], – նշում է Մ. Արեղյանը:

Լսելով հռչակավոր դյուցազուններ Սանասարի ու Բաղդասարի մասին՝ նա նամակ է գրում.

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից
 Շատ բարև Սանասարին.
 Շատ բարև Բաղդասարին, Սանասարին:
 Սանասա՛ր տղա,
 Ես Պղընձե քաղաքի թագավորի աղջիկն եմ:
 Իմ սիրտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սուրբ է.
 Իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է.
 Աստըծու շնորհքով լցուկ եմ:
 Շատեր էկած են իմ վերա, ինձ ուզելու.
 Քառասուն տեղե քառասուն մարդ է էկած,
 Ես խոսք չեմ տվե, ես հա չե՛մ ասե.
 Էրագով ըզբեզ տեսեր եմ, արի ինձի ա՛ն.
 Ինձի շատ դուր կը գաս դու...
 Արի, ինձի տար քեզ համար» [12]:

Պատումներից մեկում (ասացող՝ մոկացի Սախո, գրառող՝ Ս. Հայկունի) Դեղձունի նամակն ուղղված է Բաղդասարին, որը հանդես է գալիս իբրև միջնորդ. «Քամի՛, նա թուղթ կը տանըս, Կը տաս իմ տեզր Բաղդասարըն, Գա, ձը տանը Սանասարըն...» [13]: Այստեղ պարզորոշ նկատելի է, որ Քառասուն-ճուղ Ծամի կերպարի մեջ խտացված ներկայանում են մայրիշխանության ժամանակների տան տիրուհուն բնորոշ մի շարք գծեր: Մայրիշխանության շրջանի (ձգվել է հին քարե դարից մինչև զարգացած նոր քարե դար) հիմնական հատկանիշներն են եղել կնոջ գերակա դիրքը տղամարդու նկատմամբ և առաջնային դերը ընդհանուր համայնքում, ամուսնության նախաձեռնումը, որոշ հարցերում կնոջ և տղամարդու իրավահավասարությունը: Վաղնջական ժամանակներում մայրիշխանության գերակա մտածողության թելադրանքով շատ հաճախ որդեճնության հարցում անգամ տղամարդու դերակատարումը նվազեցվում էր: Սերնդի շարունակությունը դիտվում էր որպես գաղտնի մի խորհուրդ, որ կնքվել էր երկրի աստվածուհու և կնոջ միջև: Կելտական ավանդության մեջ, օրինակ, արևի աստվածը, իր սիրած էակին մերձենալու նպատակով, վերափոխվում է միջատի, ընկնում ջրի մեջ, որը խմում է իր սիրելին՝ չնկատելով նրան: Այդպես նա հղիանում է ու ծնում կելտերի ամենահայտնի հերոսին՝ Կուխուլինին [14]:

Կնոջ գերակա դիրքի այսպիսի նկարագրումը, էպոսի այս և ուրիշ հատվածներում պատմվող համանման միջադեպերը պարզորոշ վկայում են այն հեռավոր անցյալի մասին, «...երբ մայր-կինը, իր տոհմի տնօրենը լինելով, ինքն էր վճռում, թե ո՛վ է արժանի իրեն պտղավորելու համար: Մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր համար ամուսին ընտրող կնոջ մասին եղած պատկերացումը պետք է

իմաստավորեր նրան թագուհի դարձնելով: Գուցե սրա մեջ է թաքնված այն պատճառը, որ թե՛ Սանասարը, թե՛ Մհերը, թե՛ Դավիթը, թե՛ Փոքր Մհերը ամուսնանում են թագուհիների հետ, որոնց արքայական պալատը իսկույն անհետ չքանում է, հենց որ այդ թագուհիներն ամուսնանում են», – նշում է Հ. Օրբելին [15]:

Դեղձունի մասին ասվում է, որ նա չամուսնացած, գերբնական աղոթքներ իմացող կույս է: Նա, ինչպես նաև Խանդութը, Գոհարը, համարվում են «իմաստուն կարդացվոր», հրաշագործ գիտելիքներ ունեցող՝ «Դեղձուն աղջիկ կախարդ էր, հմայիչ էր» [3]: Դեղձունը դյուխող էր, նրան ուզելու եկած քառասուն երիտասարդները կախարդվել էին նրանից ու դարձել ձերուհիներ: «Եթե դա, մի կողմից, գեղեցիկ աղջկա հմայքն է երիտասարդների վրա թափած՝ պատկերավոր արտահայտությամբ, մյուս կողմից, երևան է բերում կախարդության, դյուխության հավատքը, որ միշտ եղել է հնուց անտի...» [16]: Հնարավոր է նաև, որ այս դրվագում ասացողները փոխաբերական իմաստ են հաղորդել աղջկա համաձայնությանը մինչև ձերություն կամ մահ սպասել հանձն առնող երիտասարդների՝ բանավոր ստեղծագործություններում շատ տարածված մոտիվին (հմմտ. Հ. Թումանյանի «Փարվանա», Ավ. Իսահակյանի «Ասպետի սերը» լեգենդները): Ի տարբերություն Փարվանա տիբուհու՝ Դեղձունը կատարել է իր ընտրությունը. նա սիրող կնոջ խոսք է ասում իր հետևից եկած Սանասարին. «Ձիկ ջան մը կա՝ քըռ ուղուրին ի: Ես քե կանչեցի, բիրի, որ խետ քե գա՛մ» [17]:

Թովմա Արծրունին պատմում է, որ Սաթենիկ տիկինը ևս օժտված էր կախարդուհու, գուշակուհու նմանատիպ հմայական գծերով: Սաթենիկի համար Արտաշեսը ամառանոց է կառուցում և անվանում այն Արտամատ, զարդարում է ծաղկանոցներով՝ զանազան խոտաբույսերից դեղեր պատրաստելու համար [18]: Նման բնատուր գիտելիքների գոյության մասին է հիշատակում նաև Ալիշանը, երբ խոսում է գերբնական բարի ոգիների կամ հավերժահարսերի մասին: Նրանք հունական նիմֆաների կամ մուսաների նման գիտուններ են, «բնությամբ ունին, ասեն, զգիտություն և ոչ ուսանելովն» [19]: Գրքեր կարդալը և գիտելիքներն ըստ կարևորության օգտագործել կարողանալը նախապատմական ժամանակներում համարվում էր հրաշագործ, գերբնական հատկություն: Այսպես՝ հմայության ուժի գիտակցումով լցված կնոջ կերպար է հռոմեական ավանդությունում հայտնի Դիդոնեն: Հմայելու իր կարողությամբ Դեղձունը հունական էպոսում համապատասխանում է նաև Կիրկե դիցուհուն, որը Ողիսևսի ընկերների կախարդելով խոզ է դարձնում: Ողիսևսին հաջողվում է խուսափել կախարդանքից՝ Հերմես աստծու տված հրաշագործ բույսի շնորհիվ: Այնուամենայնիվ, նա հմայվում է Կիրկեի գեղեցկությամբ, լցվում բուռն սիրով, ինչի արդյունքում ծնվում է նրա որդի Տելեգոնը [20]:

Որոշակի ընդհանրություններ կարելի է նկատել հեթանոսական դիցուհի Դեղձունի և Բասկյան ավանդագրույցներում հիշատակվող լամինների կերպարների միջև: Վերջիններս էլ ոսկեծամ, դյուրթող արարածներ են, և մարդիկ նրանց հաճախ տեսնում են մի Բարձր ժայռի վրա նստած, խարտյաշ մազերը սանրելիս [21]: Իսկ վրացական ավանդության մեջ Դեղձուն Ծամին համապատասխանող Դալի դիցուհին, Մհերի գուգորդի՝ Ամիրանիի մայրն է, որը նույնպես շիկահեր է ու հուր հեր, իր մազերով հերոսին կապում է ժայռին [22]: Ի տարբերություն Դալի դիցուհու՝ Դեղձունի կախարդական ամբողջ ուժն ամփոփված է ոչ թե արևագույն մազերի, այլ ծովի հատակում ապրող վիշապի բերանում գտնվող թանկարժեք քարի մեջ:

Ս. Հարությունյանը գտնում է, որ Դեղձունը նաև վաղնջական ժամանակներում մարդու առասպելական պատկերացումների արդյունք հանդիսացող մի հին դիցուհու վիպականացած հետնորդն է: Նա արևի հեթանոսական խորհրդանիշն է: Տարբեր ժողովուրդների առասպելաստեղծ մտածողության համակարգը կենսակենտրոն արևի բազմաթիվ կերպերի անդրադարձ է տվել ավանդություններում: Եգիպտական առասպելներում, օրինակ, արևը պատկերվել է երկնային կովի հորթուկի, տիեզերական միջատի կողմից գլորվող գնդիկի կամ Գոր աստծո աչքի տեսքով [23]: Երբեմն արևի աստծո ծնունդը կապվել է ձվի կամ լոտոսի ծաղկի հետ: Արևը հաճախ պատկերվել է նաև կտուցին օղ բռնած թռչունի, մանկան կամ հրեղեն աղջկա կերպավորումներով [24]: Արևի առասպելները բազմաթիվ գուգահեռներ ունեն համաշխարհային առասպելաբանության մեջ, և Դեղձունի մասին նման պատկերացումը դրանցից մեկն է: Նա ոչ միայն ամպրոպային հերոսի կինն է, այլև մայր-աստվածուհի, որն այս ճյուղում կապվում է Միհրի՝ արևի պաշտամունքի հետ:

Բանագետ Ա. Պետրոսյանը նույնպես գտնում է, որ Դեղձունը՝ «որպես բաց դեղին մազերով «ակն ու արեգակ» աղջիկ, պարզորոշ կերպով կարող է համարվել արևային մի աստվածության վիպական արտացոլումը, արևի աստծո դուստրը» [25]: Արևային հատկանիշների մասին է խոսում հենց նրա անունը: Ինչպես բացատրում է Մ. Աբեղյանը, Դեղձուն Ծամ նշանակում է դեղձանամազ, խարտյաշ: Նա առասպելական կերպար է, «հանդես է գալիս իբրև ամպրոպային վիշապից գերված մի «ակն ու արեգակ» աղջիկ» [26]: Եվ շատ ժողովուրդների ավանդություններին կամ հեքիաթներին բնորոշ հրեղեն աղջկա կերպարը, որը կարող է արեգակին փոխարինել՝ իր վրա վերցնելով նրան հատուկ գործառույթները (լուսավորելու, ջերմացնելու, կենսատվության և այլն), հենց դրա վկայությունն է: Պատումներից մեկում (ասացող՝ քավառցի Դանիել Ղազարյան, գրառող՝ Վ. Տեր-Գրիգորյան) Բաղդասարը կովի է բռնվում Կրակ Խափուշիկ անունով մեկի հետ, որը, անձր փրկելու հույսով, նրան առաջարկում է իր դստերը՝ Դեղձունին. «Աղջիկ մ'ունիմ, անուն Դեղձուն-Ծամ: Արեգական կ'ասա՝ դու մի՛ ելնի, ես կ'ելնիմ ու կամ» [27]:

Էպոսում հենց այնպես ոչինչ չի կատարվում, յուրաքանչյուր գործողություն թելադրված է ու պատճառաբանված: Ուրեմն, ամուսնությունը կարևորագույն թեմա է ու նույնպես պատճառաբանված: Բայց այն կարևոր է վեպի համար ո՛չ միայն հերոսների՝ հենց ամուսնանալու փաստով, այլ ժառանգունենալու, սերունդը շարունակելու, Մասնա տան ճրագը վառ պահելու գերխնդրով [28]: Ամուսնության նպատակով այլ երկիր մեկնող հերոսը արքեստիպի թելադրանքով նպատակին պետք է հասնի միայն վիշապամարտից հետո: Մարգիս Հարությունյանը գտնում է, որ «վիշապամարտը մեծ մասամբ առաջադրվում է իբրև ամուսնության կանխապայման կա՛մ աղջկա կողմից, կա՛մ նրա հոր: Իսկ առանձին դեպքերում վիշապամարտը հենց բուն ամուսնության նպատակն է» [29]: Ժողովրդի բանավոր մտածողության մեջ վիշապի կողմից հափշտակված արևը մի աղջիկ է կամ թանկարժեք ակ: Վիշապը թույլ չի տալիս, որ նա լուսավորի աշխարհը. այն պահում է մշտական խավարի մեջ: Նրան փրկում է ամպրոպային աստվածը կամ վիշապամարտիկը:

Դեղձունի կերպարում, ինչպես նրա նախորդի՝ Օովյան-Օովինարի կերպարում, պահպանվել են հին ամպրոպային կովի մասին եղած առասպելի արձագանքները. իզուր չէ, որ հենց նա՛ է վիշապամարտիկ Մանասարի կինը դառնում: Վիշապի հետ կովելով արեգակ-աղջկան տիրանալը առասպելական տարածված մոտիվ է, որը հանդիպում է շատ ժողովուրդների մտածողության մեջ: «Ով որ ուժով ըլնի...Ակ վիշապի բերնեն հանի, Թագավորի հետ կռիվ անի, կտրիճ ըլնի, - Աղջիկն իրեն կը տանի», - պատմում է ասացողը [30]:

Քանի որ Մանասարը վիշապամարտիկ է՝ ջրային-ամպրոպային ծագումով [31], ապա վիշապի հետ նրա կռիվն ուղեկցվում է կայծակներով, քամիներով, սև-մութ ամպերի կուտակումներով. «...Էս գիշեր քամի մի փչեց, Սև ամպ մի Մասնա հե՛տ էկավ, Անձրև էնոր մոտեն էկավ, քաղաք թրջեց» [32]: Ամպերի գույներն անգամ խորհրդանշական են: Առասպելաբանության մեջ անձրևաբեր ամպրոպային ամպերի սև գույնը հակադրվում է սովորաբար սպիտակ գույնին, սակայն այս դեպքում առկա է նաև դեղինը՝ արևի գույնը, որպես արևային դիցուհուն բնորոշ գույն, մինչդեռ հնդկական դիցաբանության մեջ աստված Կրիշնայի և նրա կնոջ գույների հակադրությունն է կապույտ-դեղինը [33]:

Համապատասխան փորձություններն անցնելուց հետո Մանասարին հաջողվում է խոսել թագավոր-հոր հետ: Անգամ աղջկա հայրը երբեմն վիշապի կերպարով է հանդես գալիս, երբ խոչընդոտներ է ստեղծում Մանասարի համար: Բանահյուսական ստեղծագործություններում հանդիպող այս մոտիվը՝ հոր այսպիսի վերաբերմունքը աղջկա փեսացուի նկատմամբ, բացատրվում է նրանով, որ հորից որդուն անցնող ժառանգությունը ժառանգման ավելի ուշ առաջացած ձև է: Հին շրջանում իշխանությունը հորից անցնում էր փեսային, այսինքն՝ դստեր ամուսնուն, փոխանցումը տեղի էր ունենում կնոջ

միջոցով (հմմտ. հեքիաթներում տարածված՝ թագավորի աղջկա համար խոստացվող կես կամ ամբողջ թագավորության մոտիվը): Փեսայի նկատմամբ ունեցած վախը՝ որպես հակառակորդի, հանգեցնում է այնպիսի դժվարին խնդիրների, փորձությունների, տարաբնույթ պատճառների առաջացման, որոնք պետք է հոգեհան անեին ու ընկճեին նրան [34]:

Էպոսում հերոսների՝ կին, թե տղամարդ, ինքնարտահայտման գլխավոր միջոցներն արարքներն են, գործողությունը: Սյուժեի հետագա զարգացումներում Դեղձունի կերպարում որակական նոր փոփոխություններ են ի հայտ գալիս: Երբ մահանում է Սանասարը, Սասնա տան հոգսն իր վրա է վերցնում Դեղձունը և Քուռկիկ Ջալալուն հեծած՝ հսկում է իր տիրույթները. «Մարդ տի էն գախ թամաշ աներ զինք ու իր ձին»: Տան տիրուհու այս գործառույթով Դեղձունը հունական առասպելաբանության մեջ համապատասխանում է Պենելոպեին: 40 հոմանիների համառությունը չի կարողանում երկրորդային դարձնել հավատարիմ կնոջ ու մոր նրա պարտականությունը, և Պենելոպեն Դեղձունի նման իր փխրուն ուսերին է կրում երկրի պահպանության հոգսը: Իսկ երբ «Էրթումկոտր» լինելով մեռնում է Մհերը, «Քառասուն-ճուղ-Ծամ Դեղձուն, Մհերի մեռնելեն հետև սուզ մտավ. Մտավ յոթ դռների հետև, Փակվեց մեկ սենեկի մի մեջ, Որ արև իր գլխուն չ'առներ, Էնտեղեն արև լուս չ'ելներ, Չուր նոր մանուկ մեծանար Մհերի տեղ բռներ» [35]:

Անանուն պատմիչը մեզ ավանդել է Արծրունյաց տեր Գրիգոր-Դերենիկի սպանության պատմությունը և նրա տիկնոջ խոր վշտի բարձրարվեստ նկարագրությունը: Նրա կինը՝ Արծրունյաց տիկին Սոֆին, վարվում է ճիշտ ինչպես Դեղձունը: «Իսկ երբ ստուգվեց կատարվածը ու ճշտվեց կորստյան լուրը, ապա տիկինն ընկավ ցած և երեսը դրեց գետնին, մոխիր ցանեց գլխին, և պալատի օդը պատեց ձեռագործ խավարը: Դեն զցեց իր պատվական, մարգարտահյուս զարդաքողը, հագավ սև զգեստ և պատրաստեց թխակերպ ծածկոց իր գլխին զցելու համար... Սենյակների դռներից վերցրեցին ոսկեհուռ, երկնականարի գույնի գործվածքները և փոխարենը բերեցին սև, ավելի կոշտ ու հույժ տխրալիները: Լաց ու կոծ անողների սպասավորները տիկնոջ հրամանով այս ու այն կողմ ընթանալով, խցեցին հրաշակերտ ապարանքի լուսանցույց պատուհանները: «Որպեսզի, - ասում է, - արեզակը երկնականարի անհաս բարձունքներում ճեմելիս, իր ճառագայթները ցած չզցի, չլուսավորի իմ խավարը... մինչև որ Աստված իմ որդիներից մեկին կդարձնի հոր պես այրասիրտ...» [36]:

Ամփոփենք: Այսպիսով, ուսումնասիրության ընթացքից պարզ է դառնում, որ Դեղձունը վաղնջական ժամանակներից մեր նախահայրերի մտածողության մեջ մնացած հեթանոսական մի դիցուհու մարմնացումն է՝ որպես արևի խորհրդանիշ: Աշխարհի տարբեր ժողովուրդների առասպելական մտածողության մեջ գոյություն ունեցող համանման կերպարների գոյությունը գալիս է

վկայելու, թե յուրաքանչյուր էպոսի բովանդակությունը աշխարհի ամբողջականությունն է, որտեղ անհատական գործողություններ են խաղարկվում, և էպիկական կերպարների ու միջադեպերի համընկնումը իրական, պատմական անձանց ու երևույթների հետ պատահական չի կարող դիտվել, քանի որ դրանք վաղնջական ժամանակներից մարդկանց գիտակցության մեջ ձևավորված, ընդհանուր գործառույթներով, մատրիցային, սինկրետիկ կերպարներ են, որոնք իրենց վրա են կրում պատմական հիշողության ազդեցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մահակյան Ա.*, «Մասնա ծոեր»-ի պատումների քննական համեմատություն, Եր., 1975, էջ 105:
2. *Элиаде М.* Аспекты мифа, М.: Академический Проект, 2010.
3. *Պետրոսյան Ա.* Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում-հայոց ազգաձագման խնդիրը, Եր., 1997, էջ 53:
4. *Кэмбелл Дж.* Тысячеликий герой, Киев. «Рефл-бук», 1997. С. 52.
5. *Мелетинский Е.М.* Мифы древнего мира в сравнительном освещении. Фольклор и пост-фольклор: структура, типология, семиотика <http://www.ruthenia.ru/folklore/meletinsky9.htm>
6. *Եղիազարյան Ա.* «Մասնա ծոեր» էպոսի պոետիկան, Եր., 2013, էջ 312:
7. *Вирсаладзе Е.Б.* Грузинский охотничий миф и поэзия, М., 1976. С. 228.
8. *Ղանալանյան Ա.* «Ավանդապատում», Եր., 1969, էջ. 69–71:
9. Բասկյան ավանդազրույցներ: Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ, 25 հատորով, հ.3, Եր., 1996, էջ 71:
10. «Մասնա ծոեր», աշխ. Ս. Հարությունյանի, Եր., 1977, ծան. էջ 626:
